

Ն. Գ. ԿՐԻԼԵՆԿՈ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

342.8(47)  
4-85

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1937

Պ 1 ՄԱՐ 2010

342.8 (A7)

Ն. Վ. ԿՐԻԼՆԵՆԿՈ

4-85

այ

# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

★

1862

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՒԿԱԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937

24 MAY 2013

35.731



1420  
37

### ԽՍՀՄ-Ի ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

1937 թվի հուլիսի 9-ին ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 4-րդ նստաշրջանն ընդունեց նոր ընտրական որենքը՝ «ԽՍՀՄ Գերագույն Սորհրդի ընտրությունների կանոնադրությունը», վորի նախագիծը քննության եր առնվել և հասկանություն ստացել ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի հունիսյան պլենումի կողմից:

Ստալինյան մեծ Սահմանադրությունը և նոր սոցիալիստական ընտրական որենքը սերտորեն կապված են իրար հետ և հանդիսանում են որդանայես մի ամբողջություն:

Ընկեր Ստալինը Սորհուրդների Համամիութենական Արտակարգ VIII համագումարում աված իր պատմական զեկուցման մեջ ասել է.

«Մեր խորհրդային հասարակությունը հասավ այն բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ վոր մարքսիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առաջին կամ ստորին փուլը»<sup>1)</sup>

Ստալինյան Սահմանադրության մեջ առավելադույն պարզությամբ ձևակերպված ու ամրապնդված են խորհրդային սոցիալիստական պետության և սոցիալիստական իրավունքի ըսկրզբունքները՝ սոցիալիզմի՝ կոմունիզմի առաջին փուլի ժամանակաշրջանում:

1) Ստալին— «ԽՍՀՄ Սահմանադրության նախագծի մասին», Հայկուհրատի 1936 թ. հրատարակություն, էջ 22:

Ստալինյան ընտրական որենքում ամենամանրամասն ձևով մշակված են ընտրութունները կատարելու կարգը, սլալամաններն ու տեխնիկան, վորոնք ԽՍՀ Միության քաղաքացիների համար լրակատար հնարավորութուն են սպահովում՝ գործնականում իրականացնելու Սահմանադրության մեջ գրված ընդհանուր, ուղղակի ու հավասար ընտրական իրավունքը՝ դադոտնի քվեարկությամբ:

Սոցիալիզմի յերկրի նոր ընտրական որենքն աշխարհիս ամենադեմոկրատական ընտրական որենքն է:

Հայտնի յէ, վոր Սահմանադրության հուչակած սկզբունքների կենսագործումը կախված է ընտրական որենքի բովանդակությունից, այն բանից, թէ ինչպէս է ձևակերպված նրա յուրաքանչյուր տողը: Բուրժուական պարլամենտարիզմի պատմությունը բավականաչափ փաստեր ու որինակներ գիտես այն մասին, թէ ինչպէս սահմանադրություններում համապատասխան ձևով խմբազրած ընտրական որենքի և նրա սահմանած ընտրությունների այս կամ այն «տեխնիկայի» ողնությամբ փաստորեն ի չիք են լինում սահմանադրություններում հուչակված իրավունքները:

Ընկեր Ստալինը բուրժուական սահմանադրությունների «դեմոկրատիզմի» մասին հետևյալն է ասում.

«Դեմոկրատիզմի տեսակետից բուրժուական սահմանադրությունները կարելի յէ յերկու խմբի բաժանել. սահմանադրությունների մի խումբն ուղղակի ժխտում է կամ փաստորեն վողչընչի յէ վերածում քաղաքացիների իրավունքների հավասարությունը և դեմոկրատական աղատությունները: Սահմանադրությունների մյուս խումբը սիրով ընդունում է և մինչև անդամ ցուցադրում է, դեմոկրատական սկզբունքները, բայց միաժամանակ այնպիսի վերադասումներ ու սահմանափակումներ է անում, վոր դեմոկրատական իրավունքներն ու աղատությունները բոլորովին խեղաթյուրված են դուրս գալիս: Նրանք խոսում են հավասար ընտրական իրավունքների մասին բոլոր քաղաքացիների համար, բայց տեղնուտեղը սահմանափակում են դրանք նստա-

կեցությամբ և կրթական ու նույնիսկ գույքային ցենզով: Նրանք խոսում են քաղաքացիներին հավասար իրավունքների մասին, բայց տեղնուտեղը վերադասություն են անում, վոր այդ չի վերաբերում կանանց կամ նրանց վերաբերում է մասամբ: Յեւ այլն և այլն»:<sup>1)</sup>

Շատ ավելի մեծ թվով այդպիսի վերադասումներ ու սահմանափակումներ կան բուրժուական ընտրական որենքներում:

Վ. Ի. Լենինն ասում էր. «Դեմոկրատիա չնչին փոքրամասնության համար, դեմոկրատիա հարուստների համար, ահա թէ ինչպիսին է կապիտալիստական հասարակության դեմոկրատիզմը: Յեթէ մենք կապիտալիստական դեմոկրատիայի մեխանիզմը մոտիկից դիտենք, ապա կտեսնենք ամեն տեղ և ամենուրեք, և՛ ընտրական իրավունքի «մանր», վորպէս թէ մանր, մանրամասնություններում (նստակեցության ցենզ, կանանց բացառում և այլն), և՛ ներկայացուցչական հիմնարկությունների տեխնիկայում, և՛ ժողովների իրավունքի փաստորեն արդելման մեջ (հասարակական շենքերը «աղքատների» համար չէն»), և՛ ամենուրյա մամուլի զուտ կապիտալիստական կազմակերպման մեջ և այլն և այլն, մենք կտեսնենք դեմոկրատիզմի սահմանափակում ու սահմանափակում: Այդ սահմանափակումները, բացառումները, բացառությունները, արդելումները՝ չքավորների համար, այդ բոլորը մանր բաներ են թվում, մանավանդ այն մարդու աչքում, ով ինքը յերբեք կարիք չի տեսել և մոտիկ չի յեղել ճնշված դասակարգերին, նրանց մասսայական կյանքին (իսկ այդպիսին է բուրժուական հրապարակախոսների ու քաղաքագետների իննը տասերորդականը, յեթէ վող ինստուտինը հարյուրերորդականը), — սակայն միասին վերցրած՝ այդ սահմանափակումները չքավորությանը գրկում, դուրս են մղում քաղաքականությունից, դեմոկրատիայում ակտիվ մասնակցություն ունենալուց:

<sup>1)</sup> Ստալին — ԽՍՀ Միության Սահմանադրության նախադժի մասին, Հայկուհրատի 1936 թ. հրատարակություն, էջ 38:

Մարքսը հիանալիորեն ըմբռնել է կապիտալիստական դեմոկրատիայի այդ եյուրօրուները՝ կոմունայի փորձի իր անալիզում ստեղծվածի քանի տարին մեկ անդամ ճնշվածներին իրավունք են տալիս վորոշելու, թե ճնշող դասակարգի ներկայացուցիչներին հատկապես վորը պետք է լինի պարլամենտում իրենց ներկայացուցիչը և ճնշի իրենց»<sup>1)</sup>

Կապիտալիստական յերկրներում տիրապետող դասակարգը հանդիսանում է բուրժուազիան։ Նա ձգտում է ընտրությունների տեխնիկայի համապատասխան կազմակերպման ճանապարհով, ամեն տեսակի իրավական կեռերի, մեկնաբանությունների ու պարզաբանումների միջոցով ընտրություններին մասնակցելուց հեռու պահել վորքան կարելի յե ավելի շատ աշխատավորական խավեր, նույնիսկ այն ժամանակ, յերբ նա ստիպված է լինում ձեւակնորեն ընդհանուր ընտրական իրավունք հայտարարել։

Կապիտալիստական յերկրների աշխատավորները սահմանադրական որենքներն ու ընտրական իրավունքի տեխնիկան պետք է իմանան, վորպեսզի բուրժուազիայի համար ավելի դժվար լինի խաբել նրանց, և թույլ չտան, վոր ճմլվեն աշխատավորների առանց այն ել սահմանափակ իրավունքները։

Մեր սոցիալիստական պետության մեջ բանվորները, կուլտւրնտեսականներն ու բոլոր աշխատավորները պետք է իրենց յերկրի Սահմանադրությունն ու ընտրական որենքն ուսումնասիրեն նրա համար, վորպեսզի իմանան, թե իրենք ինչպես կարող են ամենից լավ ոգտապործել Ստալինյան Սահմանադրությամբ իրենց տրված իրավունքները՝ սոցիալիստական կարգը ՆՍՀՄ-ում ամրապնդելու ու զարգացնելու համար։

Բուրժուական պարլամենտորիզմի պատմությունը ցույց է տվել, վոր այն հիմնական հնարքներն ու խորամանկությունները, վորոնց զիմել է բուրժուազիան ընտրական որենքի տեխնիկան մշակելիս, վերաբերել են ընտրական ոկրուզներ ստեղծելու սխտեմին, ընտրական ցուցակներ կազմելու կարգին, թեկնածու-

ներ առաջադրելու սխտեմին, քվեարկելու և ձայները հաշվելու սխտեմին, աքիտացիայի աղատությունն իրականացնելու իրավունքին։

Յեվ այդ պատահականությունն չե. բուրժուազիան հասկանում է, թե պայքարող քաղաքական կուսակցությունների առկայության դեպքում ինչպիսի խոշոր դեր է խաղում ընտրությունների այս կամ այն սխտեմը, քվեարկելու և ձայները հաշվելու այս կամ այն սխտեմը սահմանելը։

Այսպես որինակ՝ մի քանի բուրժուական յերկրներում կիրառվում է ընտրությունների համեմատական սխտեմը։ Բաղմաթիվ քաղաքական կուսակցությունների առկայության դեպքում այդ սխտեմն ավելի դեմոկրատական է, քան, այսպես կոչված՝ մաթորիտար սխտեմը։ Ընտրությունների համեմատական սխտեմի դեպքում յուրաքանչյուր կուսակցությունն առաջադրում է իր թեկնածուների վորոշակի ցուցակն ըստ ընտրական ոկրուզների, ըստվորում ընտրողը ձայն է տալիս ամբողջ ցուցակին, հաճախ միայն նրա համարին։ Այնուհետև պատգամավորական տեղերի թիվը բաշխվում է համաձայն այն ձայների թվի, վոր ըստացել է մրցող ցուցակներից յուրաքանչյուրը։ Այդպիսով նույնիսկ համեմատաբար քիչ ձայներ ստացած կուսակցությունը կարող է պահանջել, վոր իր ցուցակի առաջին թեկնածուներն ընկնեն ընտրվածների թվի մեջ։ Այս ընտրական սխտեմի արատն այն է, վոր ընտրողին նա կտրում է կենդանի մարդկանցից՝ պատգամավորներից։

Իսկ ձայները հաշվելու մաթորիտար ընտրական սխտեմով բացարձակ մեծամասնության սխտեմով՝ ամբողջապես անցնում է այն կուսակցության ցուցակը, վորը բացարձակ մեծամասնություն է ստացել, այսինքն՝ տված բոլոր քվեների կեսից ավելին։ Արդյունքն այն է լինում, վոր մյուս կուսակցությունները բոլորովին առանց ներկայացուցիչների յեն մնում։

Ավելի վատ է հարաբերական մեծամասնության ընտրական սխտեմը։

Անգլիայում, վորտեղ ընտրությունների ժամանակ պայքա-

1) Լենին— Յերկեր, հատ. XXI, ուս. հրատ., էջ՝ 430:

րում են կոնսերվատորների (սահայանդականների), լիբերալների (ազատամիտների), լեյբորիստների (աշխատանքի) և կոմունիստական կուսակցությունները, յուրաքանչյուր ընտրական ուղուցում ընտրված և համարվում այն թեկնածուն, վորը անցնի հարաբերական մեծամասնություն և ստացել: Յեթե, որինակ, ընտրությունների ժամանակ մի թեկնածուն ստացել է 2000 ձայն, մյուսը՝ 1900, յերրորդը՝ 1800 և չորրորդը՝ 750 ձայն, ապա ընտրված է համարվում 2000 ձայն ստացողը, թեև, փաստորեն ընտրողների յերկու յերրորդից ավելին նրան դեմ են արտահայտվել: Այս դեպքում չորրորդ թեկնածուն զրկվում է 150 Փ. ստերլինգ դրովականից, վորովհետև նա բոլոր քվեարկողների մեկ ութերորդից պակաս ձայն է ստացել:

Ընտրությունների այսպիսի խորամանկ տեխնիկայի շնորհիվ 1931 թ. լեյբորիստները, վորոնք 6·650 հ. ձայն էլին շահել, ըստացան 52 մանդատ, իսկ կոնսերվատորները, վորոնք 12 միլիոն ձայն էլին շահել, այսինքն ընդամենը յերկու անդամ ավելի, ստացան 471 մանդատ, այսինքն՝ ինն անգամ ավելի:

Փաշխտական յերկրներում փաստորեն ընտրական իրավունքը վերացված և դեմոկրատիան վոչնչացված է: Այսպես՝ Փաշխտական Իտալիայում «ընտրությունների» ժամանակ հանդես է դալիս միայն մեկ ցուցակ, վոր կազմում է այսպես կոչված՝ «Փաշիզմի մեծ խորհուրդը» (այս խորհրդի անդամներին նշանակում ու հեռացնում է անձամբ ինքը՝ կառավարության գլուխը՝ Մուսոլինին): Քվեարկվում է ամբողջ ցուցակը՝ 400 թեկնածուներով: Ընտրողը պարտավոր է քվեաթերթիկի վրա գրել՝ «այո» կամ «վոչ»: Մակայն դրա հետ միասին տերրորն այնքան ուժեղ է, վոր քիչ համարձակներ են գտնվում, վորոնք պատասխանում են՝ «վոչ»:

Բուրժուա-դեմոկրատական յերկրներից վոչ մեկում ընտրությունները փաստորեն վո՛չ ընդհանուր են, վո՛չ հավասար: Նախ և առաջ շատ կապիտալիստական յերկրներում (մասնավորապես Ֆրանսիայում, Իեդիայում և Շվեյցարիայում) ընտրական իրա-

վունք չունեն կանայք, այսինքն չափահաս բնակչության կեսը:

Նույնիսկ «ամենադեմոկրատական» բուրժուական յերկրներում որենքները զանազան ցենզային պահանջներ են առաջադրում— գույքային, կրթական, տարիքի, նստակեցություն և այլ ցենզեր:

Գույքային ցենզ անաքող կերպով գոյություն ունի, որինակ, Ամերիկայի մի քանի նահանգներում և Կանադայի պրովինցիաներում: Գույքային ցենզը շատ ավելի լայնորեն կիրառվում է յերկրորդ պալատի ընտրությունների ժամանակ, վորը բուրժուական յերկրներում սովորաբար հանդիսանում է ռեակցիայի կենտրոնը և վորեւե առաջադիմության արդելակը:

ԱՄՆ-ի Ալաբամա նահանգում ըստ ընտրական որենքների ընտրություններին մասնակցելու համար պահանջվում է, վոր ընտրողն ինքը, կամ իր կնոջ միջոցով «տիրապետելիս լինի» նույն նահանգում քառասուն ակր հողի և ազրելիս լինի այնտեղ: Կամ թե ընտրողն ինքը, կամ իր կնոջ միջոցով պետք է տիրապետի անչարժ գույքի, վոր գտնվելիս լինի նույն նահանգում և հարկատվության համար դնահատված լինի 300 դոլլար կամ ավելի բարձր: Գեորգի նահանգում ընտրողից պահանջվում է, վոր անձամբ տիրապետելիս լինի առնվազն 40 ակր հողի, կամ ունենա 500 դոլլար արժողության բանչարժ գույք: Բացի այդ, պահանջվում է «լավ» բնավորություն ունենալ և հասկանալ քաղաքացիական պարտականությունները:

Շվեդիայում վերին պալատում կարող են ընտրվել միայն այն աղամարդիկ ու կանայք, վորոնք մինչև ընտրություններն առնվազն վեց տարվա ընթացքում ունեցել են պետական Ֆինանսական մարմինների կողմից վոչ պակաս քան 50 հազար կրոն գնահատած գույք, կամ թե գույքային ու յեկամտային հարկ են վճարել առնվազն 3 հազար կրոն:

Անգլիայում արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունների տերերը, ինչպես և նրանց կանայք, վորոչ դեպքերում յերկրորդ քվեն տալու իրավունք ունեն:

Բուրժուական յերկրներում աշխատավորութիւնն ընտրական իրավունքներից զրկելու գործում մեծ նշանակութիւն ունեն տարիքի ցենզի, նստակեցութեան, կրթական և այլ ցենզերի սահմանափակումները:

Բուրժուական յերկրների մեծ մասում, նույնիսկ բուրժուազեմոկրատական յերկրներում, ընդհանուր քաղաքացիական չափահասութեան տարիքը խիստ տարբերվում է այն տարիքից, վոր իրավունք է տալիս ընտրել ներքին ու վերին պալատներում և ընտրվել այս և այն պալատում:

Այն յերիտասարդը, վոր քաղաքացիական տեսակետից լրիվ չափով իրավասու և գործունակ է համարվում, որենքի խախտման համար յենթակա յե պատասխանատւութեան և լիակատար չափով կրում է սահմանված պատիժը, այդ յերիտասարդը, ընտրութիւններին մասնակցելու տարիքային ցենզի բարձրացման հետեւանքով, հեռացվում է քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորութիւնից:

Պետք է նկատի ունենալ մի հանդամանք ևս: Կապիտալիստական յերկրներում բուրժուայի և բանվորի կյանքի միջին տեւողութիւնը խիստ տարբերվում են իրարից:

Որինակ՝ բուրժուաների ու կալվածատերերի նշանակալից մասն ապրում է մինչև 60 տարեկան հասակը, բայց բանվորները, գաղանային շահագործման, աշխատանքի դժոխային պայմանների, բնակարանային նույնպիսի պայմանների հետեւանքով, շարունակ կիսաքաղց մնալու, գործազրկութեան հետեւանքով շատ քիչ է պատահում, վոր այդ տարիքին հասնեն: Դրա համար ել տենելոր դասակարգերի և պրոլետարիատի տոկոսային հարարեւորութիւնը կապիտալիստական յերկրների բնակչութեան ավելի տարիքավորների խմբերում այլ է, քան ավելի յերիտասարդ խմբերում:

Վորպէս կանոն, բուրժուական յերկրներում ներքին պալատի պատգամավոր ընտրելու և ընտրվելու իրավունք տվող տարիքը տարբերվում են միմյանցից: Այդ յերեւում է հետեւյալ աղյուսակից.

Յերկրի անունը	Ընտրելու իրավունք ունեն	Ընտրվելու իրավունք ունեն
Շվեյցարիա . . . . .	20 տար.	21 տար.
Չեխոսլովակիա . . . . .	21 »	30 »
Բելգիա . . . . .	21 »	25 »
Ֆրանսիա . . . . .	21 »	25 »
Անգլիա . . . . .	21 »	25 »
ԱՄՆ . . . . .	21 »	25 »
Ճապոնիա . . . . .	25 »	30 »

Արգենտինայում և Մեքսիկայում ընտրվելու իրավունքն ըսկըսվում է միայն 25 տարեկան հասակից, ըստ վորում Մեքսիկայում ամուսնացածներն ընտրական իրավունք են ստանում 21 տարեկան հասակից: Այս յերկու յերկրներում ել կանայք ընտրական իրավունքներ չունեն:

Ֆրանսիայի հիմնական սահմանադրութիւնների պատմութեան միջոցով կարելի յե հետեւել ու տեսնել, թե բուրժուական սահմանադրութիւններն ինչպէս են ավելի ու ավելի բարձր տարիքային ցենզ սահմանել.

	Ընտրող- ների տարիքը	Ներքին պա- լատի պատ- գամավորնե- րի տարիքը	Վերին պալատի պատգամավորների տարիքը
1. 1791 թվի սահմանա- դրու թրունը . . . .	21 տար.	25 տար.	Վերին պալատ չկա
2 1793 թվի սահմանա- դրու թրունը (ամենա- դեմոկրատիկ բուր- ժուական սահմանա- դրու թրունը) . . . .	21 »	21 »	» » »
3. 1814 թվի սահմանա- դրու թրունը (ամեա- ռեակցիոնը, վոր հրա- պարակվել է Բուր- բոնների վերականգ- նման ժամանակ . .	30 »	40 »	25—30 տարեկան (վո- րովհետև ընտրվում ու նշանակվում էր տխուր- սավոր ազնվականու- թյունը)
4. 1830 թվի Հուլիսյան միապետության սահ- մանադրու թրունը . .	25 »	30 »	25—30 տարեկան
5. 1848 թվի հանրապե- տական սահմանա- դրու թրունը . . . .	21 »	25 »	Վերին պալատ չկա
6. 1875 թվի մինչ որս գործող սահմանա- դրու թրունը . . . .	21 »	25 »	40 տարեկան

Սովորաբար բուրժուազիայի պաշտպանները ընտրական տարիքային բարձր ցենզի անհրաժեշտությունը հիմնավորում են նրանով, վոր որենադրական աշխատանքին մասնակցելու համար վորոշ հասունություն է հարկավոր: Այս պատճառաբանու-  
թյան կեղծությունը յերևում է նրանից, վոր նախ՝ ինչպես ար-  
դեն նշեցինք, որենք ընդունում է, վոր այդ նույն անձնավորու-  
թյունը հասունացած է ամեն մի քաղաքացիական գործունեյու-  
թյան համար, ամուսնանալու և յերեխաներ դաստիարակելու հա-  
մար, այնքան հասունացած է, վոր կարող է իր բոլոր արարքնե-

րի համար պատասխանատու լինել քրեական դատարանի առջև,  
վերջապես այնքան հասունացած է, վոր կարող է զինվո-  
րական ծառայություն կատարել և թնդանոթի միս դառնալ:  
Յերկրորդ՝ ընտրությունների ժամանակ ունեվոր դասակարգե-  
լից հաճախ ավելի փոքր տարիքային ցենզ է պահանջվում:

Ճրանսիական 1814 թվականի ռեակցիոն սահմանադրությամբ  
սահմանված էր, վոր վերին արխատկրատական պալատում հեր-  
ցոզները, կոմսերը, բարոնները, իշխանազները կարող են ըն-  
տրվել 25—30 տարեկան հասակում, իսկ ներքին պալատում կա-  
րող են ընտրվել միայն 40 տարին լրացրած անձինք:

Նույն պատկերը մենք տեսնում ենք ժամանակակից Հուն-  
դարիայում: 1926 թվականի որենքի համաձայն Հաբսբուրգների  
տան իշխանազները «ժառանգական իրավունքի» ուժով կարող են  
վերին արխատկրատական պալատն ընդունվել 24 տարեկան հա-  
սակից, հերցոզները, կոմսերը, բարոնները՝ նույնպես 24 տարե-  
կանից, մյուս բոլոր պատգամավորներն այդ պալատում կարող  
են ընտրվել 35 տարեկան հասակից: Իսկ ներքին պալատում  
պատգամավոր կարող են ընտրվել միայն 30 տարեկան հասակից  
սկսած: Նույն Հունդարիայում բարձրագույն կրթություն ունե-  
ցած անձինք ընտրական իրավունք են ստանում հասակից ան-  
կախ:

Յարական Ռուսաստանում բոլորը չափահաս էլին համար-  
վում 21 տարեկան հասակից, իսկ ցարը՝ 16 տարեկանից: Հա-  
րավալալիայում թագավորն ու գահաժառանգը չափահաս են հա-  
մարվում 18 տարեկան հասակից: Միապետական պետությունե-  
րի մեծ մասում միապետն ավելի շուտ է չափահաս համարվում,  
քան մյուս քաղաքացիները: Այսպիսով տարիքային ցենզն ամե-  
նեվին էլ ընտրողի «հասունությունը» նկատառումներով չի ստեղծ-  
ված: Պետությունը կառավարելու համար միապետը «հասու-  
նանում» է 16 կամ 18 տարեկան հասակում: Այդ սահմանափա-  
կումների նպատակը պարզ է— բանվոր դասակարգի ու աշխա-  
տավորության յերիտասարդությունը հեռու պահել յերկրի քա-  
ղաքական կյանքին մասնակցելուց:

Միայն բանվորներն ու գյուղացիներն խորհրդային սոցիալիստական պետութունն է, վոր 18 տարին լրացրած յերկու սեռի քաղաքացիներին լիակատար ու անսահմանափակ իրավունակութուն է տալիս վճռականապես բոլոր բնագավառներում— և՛ ակտիվ, և՛ պասիվ ընտրական իրավունք, և՛ քաղաքացիական լիիրավութուն:

Այդպիսով, սոցիալիստական պետութւան ընտրական իրավունքն ամենաընդունակատականն է:

Նստակեցութւան ցենդն ընտրական իրավունքը սահմանափակելու շատ սիրոված մեթոդն է: Այդ ցենդով պահանջվում է, վոր ընտրելու, իսկ հաճախ ել ընտրվելու համար հարկավոր են վորոշ թվով ամիսներ, իսկ յերբեմն ել տարիներ ապրած լինել տվյալ ընտրական ոկրուղում, իսկ յերբեմն, նույնիսկ տվյալ համայնքում կամ այնտեղ ունենալ բնակարան կամ ձեռնարկութուն: Վերջին վերապահումը շատ նշանակալից է: Բուրժուան կամ կալվածատերը վորքան ցանկանում է՝ կարող է իր բնակավայրը փոխել, բայց քանի վոր նրա դործարանը, կալվածքը, տունը, կամ նույնիսկ բնակարանը տեղն են մնում, նա նստակեցութւան ցենդի բացակայութւան հիմունքներով յերբեք չի զրկվում ընտրական իրավունքից: Այնինչ միլիոնավոր բանվորներ, մանավանդ սեղոնայիններ և այլ աշխատավորներ, վորոնք աշխատանք վորոնելով ստիպված են հաճախակի փոխել իրենց բնակավայրը, հենց միայն այս մեկ փաստի հետևանքով զրկվում են ընտրական իրավունքներից, և այդպիսով, ինչպես շատ շեշտակի նշել է մի գիտնական, բնակավայրի փոփոխումը հավասարվում է ծանր վտճարագործութւան և բանվորներին ու աշխատավորներին զրկում է ընտրական իրավունքներից:

4. Մարքսն իր «Լուի Բոնապարտի բրյումերի 18»-ը անմահ աշխատութւան մեջ ցույց է տալիս, թե բուրժուազիան ինչպես եր ողտագործում նստակեցութւան ցենդը: Յերբ 1848 թվի փետրվարյան հեղափոխութունը հանդիսավոր կերպով ընդհանուր ընտրական իրավունք հայտարարեց, դրանից հետո «բուրժուական հանրապետականները չկարողացան ջնջել այդ դեպքը: Նը-

րանք ստիպված յեղան բավարարվել լրացուցիչ սահմանափակող կետով, վորի հիման վրա ընտրողից պահանջվում էր, վոր նա վեց ամիս ապրած լիներ ընտրութւան վայրում»: <sup>1)</sup>

1849-1850 թվերի սեպտեմբերի ազգային ժողովը չէր համարձակվում ուղղակի վերացված հայտարարել ընդհանուր ընտրական իրավունքը. 1850 թվի մայիսի 31-ի որենքով այդ իրավունքը վերացվեց այն պահանջի միջոցով, ըստ վորի ընտրողից պահանջվում էր, վոր յերեք տարի նա ապրած լիներ ընտրութունների վայրում, ըստ վորում ընտրութունների վայրում բանվորների ապրած լինելու ժամանակամիջոցը պետք է վավերացված լիներ աշխատանք տվողի կողմից:

«Մայիսի 31-ի որենքը,— գրում է Մարքսը,— ընտրական ցուցակներից դուրս դցեց առնվազն յերեք միլիոն ձայն, վորով ընտրողների թիվը պակսեցրեց մինչև յոթ միլիոնը»: <sup>2)</sup>

Հունգարական պարլամենտի պատգամավորների ընտրութւան 1925 թ. ոգոստոսի 25-ի որենքը նույնանման բացահայտ կերպով նստակեցութւան ցենդի պատրվակով բանվորներին զրկում է ընտրական իրավունքից՝ պահանջելով, վոր նրանք յերկու տարի ապրած լինեն ընտրական վայրում, կամ թե բնակարան ունենան միևնույն համայնքում:

Սակայն որենքը նստակեցութւան ցենդի պահանջից հողատուրությամբ աղատում է չինովնիկներին, տերտերներին, բուրժուական ինտելիգենցիային և այլն:

Բուրժուազիալիստական յերկրներում այդ նստակեցութւան ցենդը դոյութուն ունի: Ամենապակասը մեկ ամիս է— նոր Զեւանդիայում (անգլիական դոմինիոն): Ամենաբարձրը— յերկու տարի: Անգլիայում՝ 3 ամիս, Ֆրանսիայում և Բելգիայում՝ 6 ամիս, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ մի քանի ամսից մինչև 2 տարի, իսկ ըստ ընդհանուր կանոնի— 1 տարի:

<sup>1)</sup> Մարքս և Ենգելս— Յերկեր, 4. VIII, 334:

<sup>2)</sup> Մարքս և Ենգելս— Յերկեր, 4. VIII, էջ 365:

Բուրժուական լրջախոհ հետազոտող Ա. Լոուելը ստիպված է հավաստել, վոր նստակեցութեան պահանջը, բացի մուրացկաններէց և չաշխատող զանազան տեսակի մարդկանցից, — վորոնք՝ նրա կարծիքով՝ իրավացիորեն են զրկված ընտրական իրավունքներէց, — այդ պահանջը ընտրական իրավունքից «զրկում է նաև արժանավոր արհեստավորներին, վորոնք իրենց զբաղմունքի հետ կապված հանգամանքների դրամամբ տեղից-տեղ են փոխադրվում, և այլ անձանց, վորոնք իրենց պրոֆեսիայի կապակցութեամբ ստիպված են մի վայրից մյուսը տեղափոխվել»: Ա. Լոուելը վորպես որինակ բերում է «Թայմս»-ում տպագրված մի ուսուցչի նամակը, վորով վերջինը գանգատվում է, թե ինքը համարյաբանը փայլուն կերպով ավարտելուց հետո իր կյանքի 40 տարվա ընթացքում վոչ մի անգամ ընտրելու իրավունք չի ստացել, վորովհետև՝ ըստ իր աշխատանքի բնույթի՝ շարունակ տեղից —տեղ փոխադրվելով, յերբեք չի կարողացել նստակեցութեան ցենդ ձեռք բերել:

Նստակեցութեան ցենդ սահմանելը սովորաբար պատճառաբանվում է կամ նրանով, վոր ընտրողը, վորպես թե, պետք է ծանոթ լինի տեղական պայմաններին, իսկ այդ ձեռք է բերվում միևնույն տեղը յերկար ժամանակ ապրելու պայմանով, կամ թե՛ ընտրողների ցուցակները կաղմելու տեխնիկական դժվարութիւններով:

Այս պատճառաբանութիւնները վոչ մի քննադատութեան չեն դիմանում: Յուցակները կաղմելու տեխնիկական դժվարութեան պատճառաբանութիւնը լիովին հերքվում է ԽՍՀ Միութեան ընտրական որենքով, վորը «քվեարկելու իրավունքի վկայական» մտցնելով՝ փայլուն կերպով լուծել է ընտրութիւններին մասնակցելու հարցը այն քաղաքացիների նկատմամբ, վորոնք փոփոխում են իրենց բնակավայրը:

Պետք է նշել, վոր բուրժուական յերկրներում նստակեցութեան ցենդն իրականում ավելի բարձր է, քան սահմանված է որենքով, վորովհետև ընտրութիւններին մասնակցելու համար ընտրողն ընտրութեան վայրում պետք է ապրի մինչ ցուցակներ

1420  
37

կաղմելը վոչ միայն այնքան ամիս կամ տարի, վորքան սահմանված է որենքով, այլև ընտրողների ցուցակները կաղմելուց հետո ել պետք է նույն տեղն ապրի մինչև ընտրութիւնների պահի: Յեթե նա ընտրութիւններից առաջ մի ուրիշ տեղ է դնում, գրանով իսկ զրկվում է քվեարկութեանը մասնակցելու հնարավորութիւնից:

Մեր ընտրական որենքը վոչ մի նստակեցութեան ցենդ չի ձանաչում: Յուրաքանչյուր ընտրող, յերբ ել փոխելու լինի իր բնակավայրը, իր նոր բնակավայրում կարող է իրազործել իր ընտրական իրավունքը:

Կրթական ցենքը, այսինքն՝ այն պահանջը, վորով ընտրելու կամ ընտրվելու իրավունքի համար մարդ վորոչ կրթութիւն պետք է սենենա, բղխում է նրանից, վոր ուսման վարձի բարձրութեան, սեփական միջոցներով ապրելու անկարելիութեան հետեւանքով (քանի վոր այնտեղ պետութիւնն ուսանողներին թուշակ ու հանրակացարաններ չի հատկացնում), ինչպես և կապիտալիստական կարգերին հատուկ մի շարք ուրիշ պատճառներով բուրժուական յերկրներում կրթութիւնը՝ և մասնավանդ բարձրագույն կրթութիւնն՝ ունենոր դասակարգերի արտոնութիւնն է հանդիսանում:

Անգլիան համարյաբանական կրթութիւն ունեցողների համար արտոնյալ դիրք է ստեղծում. նրանք առանձին լրացուցիչ պատղամայրներ են ընտրում՝ այսպես կոչված՝ համալսարանական ընտրական ուղուցներից: Այսպիսով, քաղաքացիների այս կատեգորիան լրացուցիչ ձայնի իրավունք ունի:

Կրթական ցենդն առավել ևս բացահայտ կերպով անց է կացված Հունգարիայում: Մենք արդեն հիշատակել ենք, վոր այնտեղ տղամարդիկ ձայնի իրավունք են ստանում 24 տարեկանից սկսած, սակայն այդ իրավունքը տրվում է միայն ժողովրդական տարրական դպրոցի 4 դասարանն ավարտած լինելու վկայական ներկայացնելու դեպքում: Իսկ յեթե տղամարդը բարձրագույն դպրոց է ավարտել, նա ընտրական իրավունք է ստանում նաև մինչև 24 տարեկան հասակին հասնելը:



Հունգարիայում կանայք 30 տարեկանից ընտրական իրավունք են ստանում, յեթե ավարտել են ժողովրդական դպրոցի 6 դասարանը, և միայն «յերեք որինական զավակ» ունեցողներին արտոնութուն է տրվում — նրանց համար բավական է 4 դասասարանն ավարտելու փաստը:

Չափազանց նշանակալից է, վոր յեթե կինն ապրում է ժառանգական դուչքի յեկամուտով, ապա նրա համար ևս բավական է 4 դասարանն ավարտած լինելը: Գուչքի դոյութունը փոխարինում է կրթությանը:

Բարձրագույն դպրոց ավարտած կանայք ընտրական իրավունքից ոգտվում են՝ անկախ իրենց տարիքից: ԱՄՆ-ի շատ նահանգներ պահանջ են մտցրել, վոր ընտրողը գրագետ լինի, — կարողանա անդլերեն գրել ու կարդալ: Ըստ անգլիացի խոշոր հետազոտող Բրայսի՝ այս և ուրիշ ճանապարհներով քվեարկելուց փաստորեն զրկվում են նեգրերի 80 տոկոսը, վորոնց հարավային նահանգներում տիրապետող դասակարգերը դիտավորյալ կերպով չեն թույլատրում կրթություն ստանալ: Նեգրերի, հնդիկների, եմիգրանտների նկատմամբ գրագիտությունը պարզելու քննությունը կատարվում է մեծ բժախնդրությամբ ու չկամությամբ:

Հաչվում են, վոր ԱՄՆ-ում նստակեցության, գրագիտության և այլ ցենդերի միջոցով մոտ 5 միլիոն մարդ զրկվում են ընտրական իրավունքից:

Մի շարք բուրժուական յերկրներում ընտրական իրավունքի սահմանափակումներ են արված ըստ ազգային-ցեղական նշանի:

Հարավ-Աֆրիկական Միության (բրիտանական դոմինիոն) սահմանադրությունը համարյա բոլոր նեգրերին ու հնդիկներին զրկում է ընտրական իրավունքներից: Այդ պետության տերիտորիայի վրա ապրում են 1,5 միլիոն սպիտակամորթ մարդիկ, 5,4 միլիոն նեգրեր, 120 հազար հնդիկներ, իսկ ընտրական իրավունքից, ինչպես սահմանադրությունն է ասում, ոչտվում են միմիայն «յեվրոպական ծագում ունեցող բրիտանական հպատակ-

ները»: Կապայի յերկրում, վոր Հարավ-Աֆրիկյան Միության մի մասն է, դունավոր ցեղերի բնակչությանն ընտրություններին թույլատրվում էր մասնակցել, սակայն հետեյալ պայմաններով. — ա) մասնակցողները 12 տարի պետք է ապրած լինեյին միևնույն տեղում, բ) պետք է ունենային յերեք հոգի սպիտակամորթ ընտրողի յերաշխավորություն, և գ) առնվազն յոթ տարի ազատված լինեյին «բնիկների մասին յեղած որենքներ» — ի ներգործությունից: Արգյունը յեղալ այն, վոր ավելի քան յերկուս և կես միլիոն նեգրերից ու հնդիկներից Կապայի յերկրում ընտրական իրավունք ստանում էյին մոտ 50 հազար մարդ — ցեղերի ավազները, առեվտրականները և այլն:

Նոր Ալեանդրիայում, վորը հռչակված է իր «դեմոկրատական» սահմանադրությամբ, բնիկ ժողովուրդը՝ մատրիները, վորպես կանոն, չեն մասնակցում ընդհանուր ընտրություններին: Բոլոր մատրիները, վորտեղ էլ ապրելիս լինեն, կադմում են մեկ ընտրական ոկրուդ և ընտրում են միայն չորս պատգամավոր, այնինչ պարլամենտը բաղկացած է 80 հոգուց: Միայն ունեվոր մատրիները կարող են մտցվել ընտրողների ընդհանուր ցուցակների մեջ:

Ալյատրալիայում և Կանադայում տեղացի բնակչությունը (այսպես կոչված՝ «բնիկները»), վորպես կանոն, ընտրական իրավունքներից զուրկ են: Կանադայի վորոշ վայրերում ընտրական իրավունքներից զրկված են բրիտանական հպատակությունը ընդունած հնդիկները, չինացիք:

Մի շարք յերկրներում ազգային-նասայական սահմանափակումները կատարված են քողարկված ձևով: Մենք արդեն հիշատակեցինք գրագիտության ցենդի մասին ԱՄՆ-ի վորոշ նահանգներում, վոր ուղղված է գլխավորապես նեգրերի դեմ:

Փաշխտական Գերմանիայում, վորտեղ ընտրական իրավունքը վերացված է, հրեաները զրկված են քաղաքացիության իրավունքից, պետական պաշտոններ զբաղելու իրավունքից, մի շարք թաղամասերում ապրելու իրավունքից:

Իմպերիալիստական պետությունների զաղութների բնիկ ժո-

դովորվել, վորը հարյուրավոր միլիոնները յե հասնում, վորպես ընդհանուր կանոն, չի մասնակցում այն պետությունների պարլամենտների ընտրությունը, վորոնց պատկանում են տվյալ գաղութները:

Ընկեր Ստալինը բուրժուական սահմանադրությունների մասին ասում է, վոր նրանք «իրենց հիմքում նացիոնալիստական են, այսինքն՝ տիրապետող ազգերի սահմանադրություն են»: «Բուրժուական սահմանադրությունները, — ասում է ընկեր Ստալինը, — լուրջապես յեղնում են այն նախադրյալից, վոր ազգերը և ռասաները չեն կարող իրավահավասար լինել, վոր կան լիիրավ ազգեր և վոչ-լիիրավ ազգեր, վոր, բացի դրանից, գոյություն ունի ազգերի կամ ռասաների նաև յերբորդե կատեգորիա, որինակ՝ գաղութներում, վորոնք ունեն ե՛լ ավելի պակաս իրավունքներ, քան վոչ-լիիրավ ազգերը»: <sup>1)</sup>

ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրությունը «յեղնում է նրանից, վոր բոլոր ազգերն ու ռասաներն իրավահավասար են»:

Սորհրդային Միության մեջ «... տարբերությունը մորթու գույնի կամ լեզվի, կուլտուրական մակարդակի կամ պետական զարգացման մակարդակի միջև, ինչպես նաև վորևե այլ տարբերություն ազգերի և ռասաների միջև — չի կարող հիմք ծառայել այն բանի համար, վորպեսզի արդարացի ազգային անիրավահավասարությունը»: <sup>2)</sup>

ԽՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ նրանց ազգությունից ու ռասայից՝ յերկրի տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնադավաններում՝ ԽՍՀՄ Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է անասան որևեք, վորի խախտումը պատժվում է խստորեն:

ԽՍՀՄ քաղաքացիներն ըստ խորհրդային ընտրական որևեքի

<sup>1)</sup> Ի. Ստալին — ԽՍՀ Միության Սահմանադրության մասին, հայերեն հրատարակ., էջ՝ 25-26:

<sup>2)</sup> Նույն տեղը:

ոգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքից, անկախ նրանց ռասայական ու ազգային պատկանելիությունից:

Ընտրական իրավունքներն ըստ ազգային հատկանիշի սահմանափակելու վորևե հնարավորություն վերացնելու համար խորհրդային ընտրական որևեքը հատկապես սահմանում է, վոր ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուզի բնակչության լեզվով:

Բուրժուական յերկրներում բացի վերոհիշյալ սահմանափակումներից՝ գոյություն ունեն ընտրական իրավունքների ելի մի շարք սահմանափակումներ: Համարյա ամեն տեղ զինվորական ծառայության մեջ գտնվող յերիտասարդությունն ընտրելու և ընտրվելու իրավունք չունի, վորովհետև բուրժուական բանակների համար քաղաքական լուսավորությունը համազոր է զինվորական դիսցիպլինայի քայքայման: Իսկ մեր Բանվորա-գյուղացիական կարմիր բանակում քաղաքական լուսավորությունն ամրապնդում և բարձրացնում է զինվորական դիսցիպլինան: ԲԳԿԻ-ի շարքերում գտնվող ԽՍՀՄ-ի քաղաքացիները հանդիսանում են լիիրավ ընտրողներ:

Շատ բուրժուական յերկրներում ընտրական իրավունքներից զրկված են այն անձինք, ովքեր ոգտվում են հասարակական բանգործությունից, գտնվում են ինամակալության տակ, ճանաչված են վորպես անվճարունակ պարտապաններ, գտնվում են ծառայության մեջ և այլն:

Ձանազան «վերապահումների», «պարզաբանումների» և «սահմանափակումների» միջոցով բուրժուազիան, վոր հայտարարել է ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունք, այդ իրավունքը վերացրել է իր ընտրական որևեքներով: Առանձին բուրժուական իդեոլոգներ, քաղաքագետներ, իրավաբաններ չեն ծածկում, վոր բուրժուական յերկրների ընտրողները — այդ միայն բնակչության վորոչ «ընտիր մասն է», իսկ ընդհանուր ընտրական իրավունքը — դա Ֆիկցիա յե, վորովհետև պետության չափահաս քաղաքացիների նշանակալից մասը փաստորեն զրկված է ընտրական իրավունքից:

Ֆրանսիացի պրոֆեսոր Բարտելմին Ֆրանսիայի ընտրական իրավունքի «գեմոկրատիզմն» այսպես է բնորոշում. «Սակայն չպետք է մտածել, թե ընտրություններին բոլորն են մասնակցում. նույնիսկ այսպես կոչված՝ ընդհանուր քվեարկության սխտեմի դեպքում ընտրական կորպուսը ներկայացնում է միայն մի վորոշ ընտիր մասը, թեպետ այդ ընտրությունը կատարվում է շատ լայնորեն»:

Բոլոր այս և ուրիշ շատ սահմանափակումները, ըստ եյուրթյան, առ վոչինչ են դարձնում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը, վորովհետև ուղղված են աշխատավորական լայն խավերի դեմ: Ինչպես ստորև ցույց կտրվի, զգալի սահմանափակումների յե յենթարկվում նաև հավասար և ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքը, և փաստորեն հաճախ խախտվում է գաղտնի քվեարկության սկզբունքը:

Սակայն սրանից ամենավին չի հետեվում, թե կապիտալիստական յերկրներին բանվոր դասակարգն ու աշխատավոր մասսաները չպետք է ոգտվեն բուրժուական գեմոկրատիայի սկզբունքներից՝ Փաշիգմի դեմ միասնական ժողովրդական ճակատ ստեղծելու պայքարում: Գիտենալով բուրժուական գեմոկրատիայի կեղծավորությունն ու ստությունը, վորպես բուրժուազիայի դիկտատուրայի դիմակավորված մի ձև, մերկացնելով բուրժ. ընտրական իրավունքի «խորամանկ մեխանիկան», կապիտալիստական յերկրների աշխատավորները պետք է առավելագույն չափով ոգտնողորձեն դոյություն ունեցող բոլոր լեզալ հնարավորությունները և պետք է բոլոր միջոցներով պայքարեն՝ բուրժուական գեմոկրատիայի լայնացման, մասնավորապես ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունքի համար:

Կոմիտեերնի համաշխարհային VII կոնգրեսում ընկեր Դիմիտրովն ասել է.

«Կողմնակից լինելով խորհրդային գեմոկրատիային՝ մենք կպաշտպանենք գեմոկրատիայի այն նվաճումների յուրաքանչյուր թիգը, վոր բանվոր դասակարգը կորգել է տարիների համառ

պայքարով, և վնասկանապես կպայքարենք նրանց ընդարձակման համար»:<sup>1)</sup>

Խորհուրդների Համամիութենական Արտակարգ VIII համագումարում արտասանած իր ճառում ընկեր Մոլոտովն ասել է.

«Բայց և այնպես, նույնիսկ կրճատված բուրժուական ադատությունները, նույնիսկ սահմանափակած գեմոկրատական իրավունքները բանվորներն ու մյուս աշխատավորական խավերը սովորել են ոգտադորձել իրենց շահերի համաձայն մասսաների քաղաքական լուսավորության համար, դալիք մարտերին՝ ուժերի անհրաժեշտ նախապատրաստության համար: Ուստի հասկանալի յե, վոր կապիտալիզմի յերկրներում՝ բանվորներն ու բոլոր գեմոկրատական տարրերն այնպիսի համառ պայքար են մղում՝ պահպանելու և ընդարձակելու համար նույնիսկ բուրժուա-գեմոկրատական վոչ մեծ ադատությունն ու իրավունքները...»:

«Հայտնի յե մեր վերաբերմունքը դեպի գեմոկրատիզմը, վորպես աշխատավորության ամենաարժեքավոր բարիքներից մեկը: Մեր սրտին մոտ են գեմոկրատիայի հաջողությունները՝ վոր յերկրում ել լինի: Մենք ուրախանում ենք գեմոկրատական իրավունքների նվաճումներով, վորտեղ ել ժողովրդական մասսաներն առաջ ընթանան այդ ուղիով»:<sup>2)</sup>

Հաղթանակած սոցիալիզմի յերկրի Մտալինյան Սահմանադրությունը և մեր նոր, սոցիալիստական ընտրական որենքը լիավին բացառում են բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության բաղաճացիների ընտրական իրավունքների բայք ու ամեն տեսակի սահմանափակումները:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամն է, վոր ընտրությունները հանդիսանում են իրապես ընդհանուր, հավասար և ուղղակի, իսկ քվեարկությունը— իրապես գաղտնի:

ԽՍՀՄ Սահմանադրության նախադժի մասին Խորհուրդների

1) Դիմիտրով— Փաշիգմի ու պատերազմի դեմ միասնական ճակատի պայքարում, էջ՝ 77:

2) Մոլոտով— Սոցիալիզմի Սահմանադրությունը:

Համամիութենական Արտակարգ VIII Համագումարին աված իր դեկլացման մեջ ընկեր Ստալինն ասել է.

«ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագծի առանձնահատկութիւնն այն է, վոր նա ազատ է այդպիսի վերապահումներից ու սահմանափակումներից: Նրա համար դոյութիւն չունեն ակտիվ կամ պասիվ քաղաքացիներ, նրա համար բոլոր քաղաքացիներն ակտիվ են: Նա տարբերութիւն չի ընդունում տղամարդկանց ու կանանց, «նստակյացների» ու «վոչ-նստակյացների», ունեւորների ու չունեւորների, կրթվածների ու վոչ-կրթվածների իրավունքների միջև: Նրա համար բոլոր քաղաքացիներն իրենց իրավունքներով հավասար են: Վո՛չ թե գույքային գրութիւնը, վո՛չ թե աղբային ծագումը, վո՛չ թե սեռը, վո՛չ թե պաշտոնեյական դիրքը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդունակութիւններն ու անձնական աշխատանքն են բնորոշում նրա դիրքը հասարակութեան մեջ»:<sup>1)</sup>

Սահմանադրութեան 135-րդ հոդվածի տեքստն այնքան ըստպահ է ու լրիվ է, վոր բացառում է ընտրական իրավունքի վորեւէ կամայական սահմանափակումների վորեւէ հնարավորութիւն, ում կողմից ել լինի այդ:

Մեր նոր ընտրական սիստեմը, վոր ճշգրիտ կերպով ձևակերպված ու ամրապնդված է ստալինյան ընտրական որենքում, ազահովում խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալումը, բանվոր դասակարգի դիկտատուրայի բազայի ընդարձակումը՝ սոցիալիզմի դարաշրջանում:

Սոցիալիստական պետութեան ընտրական որենքի յուրաքանչյուր հոդվածի նպատակն է՝ իրականում ապահովել ընդհանուր, հովասար, ուղղակի ընտրական իրավունքը՝ զաղտնի քվեարկութեամբ, յերաշխաւորել սոցիալիստական պետութեան քաղաքացիների իրական մասնակցութիւնն ընտրութիւններին, պաշտ-

պանել նրանց քվեարկութեան արդիւնքները բոլոր առօրին ազավաղումների փորձերից:

Մեր ընտրական որենքի մասին կարելի յէ ասել ընկեր Ստալինի խոսքերով, վոր նա ասել է ԽՍՀՄ Սահմանադրութեան մասին, թե՛ ի տարբերութիւն բուրժուական որենքների, վորոնք սահմանափակվում են քաղաքացիների ձևական իրավունքների գրանցումով, առանց հողաւու այդ իրավունքների կենսագործման պայմանների, հնարավորութիւնների ու միջոցների մասին, մեր ընտրական որենքը «... չի սահմանափակվում քաղաքացիների ձևական իրավունքների գրանցումով, այլ ծանրութեան կենտրոնը տեղափոխում է այդ իրավունքների ապահովման հարցի վրա, այդ իրավունքների կենսագործման միջոցների հարցի վրա»:<sup>1)</sup>

Վերը հիշատակեցինք ընտրական իրավունքի այն սահմանափակումները, վոր դոյութիւն ունեն բուրժուական յերկրներում: Սակայն վոչ միշտ ձևականորեն ընտրական իրավունք ունեցող աշխատավորը հնարավորութիւն է ունենում կենսագործելու նույնիսկ այդ խուղած իրավունքները: Կապիտալիզմի պայմաններն այդ հնարավորութիւնը չեն տալիս: Այդ պատճառով ել կապիտալիստական յերկրներում ընտրութիւններին չմասնակցելը, այսպէս կոչված՝ արսենտիզմը, բարձր թիւերի յէ հասնում:

Այսպէս, բրիտանական հանրագիտարանի վերջին հրատարակութեան տվյալներով ընտրական իրավունք ունեցողներից ընտրութիւններին մասնակցել են միջին թիւով—Անգլիայում՝ 70%, Ֆրանսիայում՝ 60 տոկոս, ԱՄՆ-ում նախագահական ընտրութիւններին՝ մոտ 80 տոկոս, կոնգրեսի ընտրութեանը՝ շատ ավելի քիչ և նախահիտլերյան Գերմանիայում՝ մոտ 75 տոկոս և այլն:

Իսկական ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքը զաղտնի քվեարկութեամբ ԽՍՀՄ-ում ապահովվում է

<sup>1)</sup> Ստալին— ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան մասին, հայ. հրատ., ԿԸ 27:

<sup>1)</sup> Ստալին— ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան մասին:

սոցիալիստական կարգի հաղթանակի փաստով ԽՍՀՄ-ում, վոր արտացոլել, որենսդրական կարգով ամրադնդվել է ԽՍՀՄ-ի Սահմանադրութեամբ: Ընտրական որենքի յուրաքանչյուր հող-վածի նպատակն է՝ ապահովել ԽՍՀՄ-ի քաղաքացիներին ընտրական իրավունքները, ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները, վոր պետքի նրանք կարողանան իրադործել այդ իրավունքը, և ակտի-վորեն մասնակցեն ընտրութեաններին:

Դրա համար ել աշխատավորները պետք է իրենց ընտրական որենքն իմանան առաջին հողվածից մինչև վերջինը: Որենքի յու-րաքանչյուր հողվածը պետք է ճշգրիտ կերպով ու անպայմանո-րեն կատարվի ընտրութեանները նախապատրաստելու և անցկաց-նելու ժամանակ:

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեաններին կանոնադր-րութեանը» բաղկացած է ութ գլխից: Առաջին գլուխը՝ «Ընտրա-կան սիստեմը», վերաբարում է ԽՍՀՄ Սահմանադրութեան 134, 135, 136, 137, 138, 141 հողվածները, վորոնք ընտրական որենքի հիմքն են հանդիսանում, որենքի, վոր կազմված է ԽՍՀՄ Սահմանադրութեանը միանգամայն համապատասխան:

«Կանոնադրութեան» առաջին գլուխն ասում է.

«ՀՈՒՎԱԾ 1.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 134-րդ հողվածի հիման վրա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտ-րութեաններն ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտ-նի քվեարկութեամբ:

ՀՈՒՎԱԾ 2.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 135-րդ հողվածի հիման վրա պատգամավորների ընտրութեաններն ընդհանուր են.— ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնք հասել են 18 տարվան, անկախ ռասայական ու ազգային պատկանելութեանից, դավա-նանքից, կրթական ցենզից, նստակեցութեանից, սոցիալական ծագումից, դուրքային գրութեանից և անցյալ գործունեութեան-ից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրու-թեաններին և ընտրվելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի մեջ, բա-

ցատութեամբ խելագարներին և այն անձերին, վորոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքների զրկու-մով:

ՀՈՒՎԱԾ 3.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 136-րդ հողվածի հիման վրա պատգամավորների ընտրութեանները հավասար են.— յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացի-ներն ընտրութեաններին մասնակցում են հավասար հիմունքնե-րով:

ՀՈՒՎԱԾ 4.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 137-րդ հողվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ողտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈՒՎԱԾ 5.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 138-րդ հողվածի հիման վրա կարմիր բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ողտվում են բոլոր քաղաքա-ցիներին հետ համահավասար:

ՀՈՒՎԱԾ 6.— ԽՍՀՄ Սահմանադրութեան 141-րդ հողվածի հիման վրա ընտրութեաններին ժամանակ թեկնածուներն առաջա-գրվում են ըստ ընտրական ոկրուղների»:

Սահմանադրութեան համապատասխան հողվածներին այս կրկնութեանը՝ ընտրական որենքում՝ խիստ կարևոր է, վորով-հետև այդ յուրաքանչյուր ընտրողին ակնհայտաբար ցույց է տա-լիս նրա իրավունքները և հնարավորութեան է տալիս տեղն ու տեղն ստուգելու, թե այդ իրավունքներն ինչպես են ապահով-ված ընտրական որենքում:

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

«ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈ-ՆԱԴՐՈՒԹՅԱՆ» II ԳԼՈՒԽԸ)

Ընտրողների ցուցակները կազմելը քաղաքական վիթխարի կարևորութեան ունեցող գործ է: Քվեարկութեանը մասնակցել կարող են միայն նրանք, ովքեր մտցված են ցուցակների մեջ:

Դրա համար ել խորհրդային իշխանության մարմինների համար ամենաառաջնակարգ ու կարևորագույն խնդիր ե հանդիսանում՝ այդ ցուցակների լրիվության ու ժամանակին կազմելու ապահովումը, ինչպես և յուրաքանչյուր քաղաքացու համար հընարավորություն ապահովելը, վոր նա ժամանակին ստուգել ցուցակները կազմելու ճշտությունն ու լրիվությունը:

Ո՞վ ե կազմում ընտրողների ցուցակները: Այդ կարևոր ա պատասխանատու խնդիրը դրված ե սոցիալիստական պետության պետական իշխանության տեղական մարմինների վրա՝ քաղաքներում՝ աշխատավորության պատգամավորների քաղաքային խորհուրդների վրա, իսկ ուսյոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ուսյոնական խորհուրդների վրա, և դյուղական վայրերում՝ աշխատավորության պատգամավորների դյուղական խորհուրդների վրա, այսինքն՝ այն մարմինների, վորոնք ընտրվել են հենց աշխատավորների կողմից, մի բան, վոր արդեն ինքնին ապահովում ե խորհրդային ընտրողի իրավունքները: Ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու և ընտրողներին հասցնելու գործի հսկողությունն որենքը դնում ե Միության խորհրդի ընտրությունների ուղղակային ընտրական հանձնաժողովների վրա (հոդվ. 44, կետ «բ»):

Ո՞վ պետք ե մտցվել ընտրողների ցուցակների մեջ:

Համաձայն մեր ընտրական որենքի՝ ընտրողների ցուցակների մեջ են մտցվում ընտրությունների որը 18 տարեկան հասակին հասած այն բոլոր քաղաքացիները, վորոնք ընտրական իրավունք ունեն և ցուցակները կազմելու միջոցին մշտապես կամ ժամանակավորապես ապրում են տվյալ խորհրդի տերիտորիայում, ըստ վորում, «ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ» (հոդվ. 11): Այդ ապահովում ե ընդհանուր և բոլորի համար հավասար ընտրական իրավունքի կենսադործումը:

Ընտրական որենքը պարտավորեցնում ե չափազանց ճշգրտություն պահպանել և մասնավորապես պահանջում ե հատկապես ստուգել այն անձանց ցուցակը, վորոնց 18 տարին պետք ե

լրանա ընտրության որը, բայց ցուցակները կազմելու միջոցին դեռ չի լրացել, և հաշվի առնել այն բոլոր քաղաքացիներին, վորոնք ժամանակավորապես ապրում են աշխատավորների պատգամավորների տվյալ խորհրդի տերիտորիայում, վորովհետև մեր որենքը նստակեցության վոչ մի ցենդ չի ճանաչում:

Ցուցակները կազմվում են այբբենական կարգով, ըստ ընտրական շրջանի, վորոնցից դյուղական կամ քաղաքային խորհրդի տերիտորիայում կարող են լինել մի քանիսը, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակության վայրը, և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից:

Ցուցակների մեջ մտցվել չեն կարող միայն այն անձինք, վորոնք դատական վճռով գրկված են ընտրական իրավունքից՝ ընտրական իրավունքից գրկվելու վերաբերյալ դատավճռի մեջ սահմանված ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես և այն անձինք, վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար:

Հարց ե ծագում—կմտցվե՞ն արդյոք կրոնական պաշտամունքի սպասավորները ընտրողների ցուցակների մեջ:

Սրան անհրաժեշտ ե պատասխանել ընկեր Ստալինի խոսքերով, վոր նա ասել ե խորհուրդների Համամիութենական Արտակարգ VIII համագումարում խՍՀՄ Սահմանադրության նախագծի 135-րդ հոդվածի ուղղման վերաբերյալ: Այդ ուղղման մեջ առաջարկվում եր. «Ընտրական իրավունքներից գրկել կրոնական պաշտամունքի սպասավորներին, նախկին սոլիտակ դավարիականներին, բոլոր նախկին մարդկանց և այն անձերին, ովքեր հանրագուտ աշխատանքով չեն զբաղվում, կամ թե, համենայն դեպս, սահմանափակել այդ կատեգորիայի անձերի ընտրական իրավունքները, տալով նրանց միայն ընտրելու իրավունք, բայց վո՛չ ընտրվելու»:

Ընկեր Ստալինն առաջարկեց մերժել այդ ուղղումը, «գայլերից վախենալ նշանակում ե՝ անտառ չմանել»<sup>1)</sup> հին առածի խոս-

<sup>1)</sup> Ստալին— խՍՀ Միության Սահմանադրության մասին:

քերով պատասխանելով այն մարդկանց, ովքեր «յերկյուղ» էին արտահայտել, թե ժողովրդին թշնամի անձերը կարող են ընկնել գերագույն մարմինները:

Ոնդիրը նրանումն է, վոր ազիտացիոն աշխատանքը բոլշևիկորեն սարվի, և այն ժամանակ ժողովուրդը թշնամի անձերին չի թողնի ներս մտնել պետական իշխանության մարմինները:

Աշխատավորների պատգամավորների ցուցակները կազմող խորհուրդը պարտավոր է ընտրություններից 30 օր առաջ հրատարակել այդ ցուցակները, կախելով այն ընդհանուրի գիտության համար, կամ թե ստեղծելով ընդհանուրի համար հնարավորություն՝ ցուցակներին ծանոթանալու խորհրդի շնորհով:

Այն քաղաքացին, վոր ընտրողների ցուցակը կազմելու մեջ վորևէ անճշտություն կգտնի, պետք է դրա մասին հայտարարություն տա ցուցակը հրատարակող՝ աշխատավորների պատգամավորների խորհրդին: Աշխատավորության պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեն այդպիսի հայտարարություն ըստանալով՝ պարտավոր է յերեք օրվա ընթացքում քննության առնել այդ հայտարարությունը և կամ ընտրողների ցուցակի մեջ համապատասխան ուղղումներ մտցնել և կամ պատճառաբանված զրավոր մերժում տալ հայտարարողին: Տվյալ քաղաքացին, իր հերթին, այդ մերժումը կարող է բողոքարկել մոտակա ժողովրդական քատարանում, վորը նույնպես յերեք օրվա ընթացքում պարտավոր է՝ հրավիրելով հայտարարողին ու տվյալ խորհրդի ներկայացուցչին՝ դռնբաց դատական նիստում քննության առնել դանդատը և վերջնականապես հարցը լուծել:

Սրանով խորհրդային արդարադատության մարմինների վրա մեծ ու պատասխանատու խնդիրներ են դրվում: Դատարանի աշխատողներից պահանջվում է ճշգրիտ, պարզ ու արագ աշխատանք: Ընտրողներին խորհրդային պետության քաղաքացիների մեծագույն իրավունքները պետք է պաշտպանվեն սոցիալիստական օրինականության ամբողջ ուժով:

Սորհրդային արդարադատության բոլոր աշխատողներից պահանջվում է լղոնության և ուշադիր վերաբերմունքի ուժեղա-

ցում դեպի մարդիկ: Անհրաժեշտ է աշխատավորների արդարացի գանգատները տարբերել կապիտալիզմի տրոցիկստական-բուխարինյան ռեստավրատորների, ճապոնա-գերմանական Փաշլիզի գործակալների ստոր տականքների կազմալուծիչ բանսարկություններից և վնասարարական մեքենայություններից:

Բոլոր քաղաքացիների համար լայն հնարավորություն է ապահովված ստուգելու ընտրողների ցուցակների ճշտությունը, ինչպես և ուղղելու ցուցակում յեղած բոլոր անճշտությունները:

ՍՍՀՄ-ի այն քաղաքացիները, վորոնք դտնվում են Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակում, Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում են լիիրավ ընտրողներ:

Ընտրական օրենքը սահմանում է (հոդվ. 12), վոր զինվորական մասերում և զորական միավորումներում դտնվող ընտրողների ցուցակները կազմվում են հրամանատարության վոյժից, հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրությամբ: Մյուս բոլոր զինվորական ծառայողները, օրինակ՝ Պաշտպանության ժողովրդական Կոմիսարիատի աշխատակիցները, ցուցակների մեջ են մտցվում ըստ իրենց բնակավայրի, աշխատավորների պատգամավորների համապատասխան խորհուրդների կողմից:

Ինչպես արդեն ասել ենք, մեր Սահմանադրությունը նստակեցության ցենզ չի փանաչում: Որենքը յուրաքանչյուր քաղաքացու համար հնարավորություն է ապահովում իր ընտրական իրավունքը կենսադործելու այնտեղ, վորտեղ ինքը դտնվելու յե ընտրությունների օրը, և այդ անկախ այն բանից, թե նա վորքան ժամանակ է ապրել տվյալ վայրում (հոդվ. 15): Այն ընտրողը, վորը փոխում է իր բնակավայրը ցուցակները հրատարակվելուց հետո, սակայն ընտրությունների օրից առաջ, պետք է իր մեկնելու մասին հայտնի այն խորհրդին, վորը նրան ընտրական ցուցակի մեջ է մտցրել: Սորհուրդն ընտրողին «քվեարկելու իրավունքի վկայական» է տալիս, վորի հիման վրա նա կարող է ընտրություններին մասնակցել իր նոր բնակավայրի, իր ցանկա-

ցած տեղում, իսկ ընտրական ցուցակում նրա առջև դիմաց նըշվում է՝ «մեկնեց»։ Այսպիսով ապահովվում է ընտրութուններին ընտրողի մասնակցութեան իրավունքը, և միաժամանակ վերացվում է մեկ անձի կողմից յերկու անգամ քվեարկելու հնարավորութունը։

Ընտրական օրենքում ասված է․

«Այն դեպքում, յերբ ընտրողն ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրութունների սրվա միջև ընկած ժամանակամիջոցում փոխում է իր բնակութեան վայրը, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը նրան տալիս է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևի «քվեարկութեան իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակի մեջ նշում է— «մեկնեց»․ նոր բնակավայրում— մշտական կամ ժամանակավոր— ընտրողը մասցվում է ընտրողների ցուցակի մեջ, ներկայացնելով անձնական վկայական, ինչպես նաև «քվեարկութեան իրավունքի վկայական»։

Այդպիսով, ընտրական ցուցակները պետք է կազմվեն Ստալինյան Սահմանադրութեան մեծ սկզբունքներին լիովին համապատասխան, լրիվ չափով ապահովելով ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի իրագործումը, դեն չպրտելով բոլոր և ամեն տեսակ սահմանափակումներն ու վերապահումները։

Պետք է նշել, վոր բուրժուական-դեմոկրատական յերկրներում ընտրողների ցուցակներ կազմելը շատ բարդ ու ծանր գործ է հանդիսանում ընտրողների համար։

Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք նահանգներում ընտրողն ամեն տարի պետք է անձամբ ներկայանա ցուցակադրող բյուրոյին և մի շարք տեղեկութուններ տա։ Որինակ՝ Պենսիլվանիայում ընտրողը պետք է պատասխանի 15-16 հարցի, վորի հետևանքով, հենց բուրժուական դիտնականների հայտարարութեամբ, ցուցակադրման սխտեմը հաճախ անցանկալի ընտրողներին հրապարակից հեռացնելու մի միջոց է դառնում, վորովհետև քվե բյուրոյում կապիտալիստական կուսակցութունն է վճռական դեր խաղում։

Ցուցակներ կազմելու անդլիական սխտեմի վերաբերյալ Լոուելլը նշում է, թե դա «հանդիսանում է խիստ դժվարաչարժ ու թանկ նստող մի գործողութուն»։

Խորհրդային սխտեմը վերին աստիճանի հասարակ է և միաժամանակ իրապես ապահովում է ընտրողների շահերը, իրականում յերաշխայութելով ընդհանուր ընտրական իրավունքը։

## ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» III ԳԼՈՒԽԸ)

Ստալինյան Սահմանադրութեան համաձայն՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յերկու պալատի համար ել— Միութեան Խորհրդի և Ազգութեանների Խորհրդի—պատգամավորներ ընտրում են բոլոր քաղաքացիներն՝ ըստ ընտրական ոկրուղների։ Այդպիսով յերկու պալատներն ել— և՛ Միութեան Խորհուրդը, վորտեղ ներկայացված են ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորների ընդհանուր շահերը՝ անկախ նրանց ազգութեանից, և՛ Ազգութեանների Խորհուրդը, վորի խնդիրն է՝ արտացոլել ԽՍՀՄ-ի ազգութեանների այն առանձին ու սպիցիֆիկ շահերը, վորոնք կապված են նրանց ազգային առանձնահատկութեանների հետ,—կազմվում են միանրման դեմոկրատիկ ձևով, ամբողջ բնակչութեան ընդհանուր ընտրութեան միջոցով։

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեան կանոնադրութեամբ» սահմանված ընտրական ոկրուղներ ստեղծելու սխտեմըն ինքնին արտահայտում է հավասար ընտրական իրավունքի ոկրուղները, վոր դրանցված է Ստալինյան Սահմանադրութեան կողմից։

Միութեան Խորհրդի ընտրութեան համար ընտրական ոկրուղներ ստեղծվում են հետևյալ սկզբունքով.—յուրաքանչյուր ոկրուղին 300 հազար բնակիչ՝ թե քաղաքի, թե դյուղի համար միանման։ Յուրաքանչյուր այդպիսի ոկրուղ Միութեան Խորհուրդ է ուղարկում մեկ պատգամավոր։ Ընտրական ոկրուղների

այսպիսի կազմակերպումն ապահովում է բանվորները ու գյուղացիների ձայների հավասարութունը:

Այնինչ, որինակ, Ֆրանսիայում, այնտեղ ընդունված ընտրական ուղիները բաժանման կարգի հետեվանքով, Փարիզի վեցերորդ բուրժուական ուղիները առաջին շրջանը, վոր ունի 8 հազար ընտրող, ապրիս է մեկ (պատգամավոր, այսինքն նույնպես, ինչպես Կորբեյի պրոլետարական ուղիները յերկրորդ շրջանը, վորն ունի 50 հազար ընտրող: Ֆրանսիայում՝ կալվածատերերի, կուլակների ու տերտերների քաղաքական ուժեղ ազդեցությունն առկա էր ևս: Վերջինս հարավի աղբարային ուղիները բնակչի մեկ ձայնը նույն կշիռն ունի, ինչ վոր հյուսիսի ընտրական ուղիները բնակչի յերեք-չորս բանվորի ձայնը:

Ազգությունների հարկերի ընտրությունների համար յուրաքանչյուր միութենական հանրապետություն բաժանվում է 25 ընտրական ուղիներ, ավտոնոմ հանրապետությունը՝ 11 ընտրական ուղիներ, ավտոնոմ մարզը՝ 5 ընտրական ուղիներ, իսկ յուրաքանչյուր ազգային ուղի Ազգությունների խորհրդի ընտրությունների համար կազմում է մեկ ընտրական ուղի: Որինակ՝ Բելուսսական ՍՍՀ-ում Ազգությունների խորհրդի ընտրությունների համար կազմվում է 25 ընտրական ուղի, Ուկր. ՍՍՀ-ում, բացի ամբողջ հանրապետության 25 ուղիները, 11 ընտրական ուղի էլ կազմվում է Մուդավական ՍՍՀ-ում և այլն: Ազգությունների խորհրդի ընտրությունների համար կազմված յուրաքանչյուր ընտրական ուղի Ազգությունների խորհուրդ է ուղարկում մեկ պատգամավոր:

Այսպիսով, այնտեղ ապահովված է բոլոր ազգությունների լիակատար իրավահավասարությունը, բոլոր միութենական հանրապետությունների հավասարությունը, բոլոր ավտոնոմ հանրապետությունների հավասարությունը, բոլոր ավտոնոմ մարզերի և բոլոր ազգային ուղիների հավասարությունը՝ Ազգությունների խորհրդի ընտրությունների մեջ:

Միության խորհրդի ընտրությունների ընտրական ուղիներն ու Ազգությունների խորհրդի ընտրությունների ընտրական ուղիները չեն զուգադիպելու միմյանց:

Մեծ նշանակություն ունեն 23-րդ և 24-րդ հոդվածները: 23-րդ հոդվածն ասում է.

«Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի ընտրությունների ընտրական ուղիները կազմվում են ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից»: 24-րդ հոդվածն ասում է. «Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի ընտրական ուղիների ցանկը հրատարակվում է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից, ընտրությունների որը նշանակելու հետ միաժամանակ»:

Բուրժուական յերկրների պարլամենտական պատմության մեջ ոեակցիոն տարրերը միշտ պայքարել են, վոր անխախտ մնա ուղիների մի անգամ ընդմիջտ սահմանված սիստեմը, և ընդհակառակն, բոլոր առաջադիմական տարրերը պահանջել են, վոր հաճախակի վերանայվի ուղիների սիստեմը և այն համապատասխանեցվի բնակչության թվին: Այս պայքարի պատճառը պարզ է: Պրոլետարական կենտրոններն ավելի արագորեն են աճել, այնինչ մի քանի հողադուրծական շրջաններ ու առանձին քաղաքներ նվազել են, նրանց ընտրողների թիվը պակասել է: Պարզ է, վոր կալվածատերերի, կապիտալիստների, տերտերների համար ավելի դյուրին է յեղել «մշակել» հետ ընկած փոքր վայրերի սակավաթիվ բնակիչներին, վորոնք սովորաբար կախման մեջ են դրուներվում տեղական կալվածատիրոջ կամ կապիտալիստից. վերջինները և սովորաբար ընտրվել են պարլամենտում:

Անդրիական պարլամենտի պատմության մեջ յերկար ժամանակ զոյություն են ունեցել զգալի թիվով այսպես կոչված՝ «նեխած փոքր վայրեր», վորոնք պատգամավոր են ուղարկել պարլամենտ, թեև այնտեղ մնացած են յեղել 10-12 բնակիչ, իսկ յերբեմն՝ ավելի պակաս: Սրանց ձայները բացարձակ կերպով վաճառվում էին:

Պատմում են, թե այդպիսի մի «նեխած փոքր վայրում» մի անգամ մնացել էր միմիայն մեկ ընտրող, վորն ինքը բացել էր ժողովը, առաջադրել իր թեկնածությունը, քվեարկել էր ու այդ կարգով էլ ընտրվել:

Թե ունակցիոն շրջանները վորքան են կառչած մնում մի ան-  
գամ սահմանված ոկրուզներին, յերևում է մինչպատերազմյան  
Գերմանիայի որինակից, վորտեղ ընտրական ոկրուզներին սխտե-  
մը մնում էր անփոփոխ՝ սկսած 1867 թվից, այսինքն՝ մի քանի  
տասնյակ տարիներին ընթացքում: Ոկրուզներ սահմանելիս յե-  
նում էյին նրանից, թե յուրաքանչյուր ոկրուզում 100 հազար  
մարդ է բնակվում, մինչդեռ մի քանի տասնամյակներում ոկ-  
րուզների թվական կազմն այնպես էր փոխվել, վոր 20-րդ դարի  
առաջին տասնամյակում Գերմանիայում յեղան ոկրուզներ, վո-  
րոնց մեջ մնացել էր 9 հազար ընտրող, և այդ այն ժամանակ,  
յերբ Բեռլինում ոկրուզներն աճել են մինչև 156 հազար հոգի  
ընտրողներին:

Ռուս բուրժուական պրոֆեսոր Լազարելսկին այս առթիվ  
ասում էր. «Բեռլինի բնակչութունն զգալիորեն աճել է, բայց  
կառավարութունը համառորեն խանգարում է նոր ոկրուզներ  
կազմելուն, վորսովհետև քաղաքական տեսակետից ամենից շատ  
պրոգրեսիվ են կուլտուրական կենտրոնները, իսկ կառավարու-  
թյունն աշխատում է արդելը լինել նրանց աղբյուրթյան ուժե-  
ղացմանը՝ ընտրությունների վրա»:

Լանդտաղի (տեղական պարլամենտի) ընտրության ընտրու-  
կան ոկրուզները Վյուրտեմբերգում կազմվել էյին դեռ 1819 թը-  
վին և մի ամբողջ դար չէր վերանայվել, այդ պատճառով էլ  
այնտեղ կային ոկրուզներ (պրոլետարական կենտրոնները), վո-  
րոնք 38 անգամ ավելի բնակիչ ունեյին, քան մյուս ոկրուզները,  
բայց և այնպես՝ բոլոր ոկրուզներն էլ ուղարկում էյին մեկական  
պատգամավոր:

Լոուելլը, նշելով, վոր Անգլիայում միանման ոկրուզներ են  
համարվում և Դերխեմը՝ 14.935 բնակչով, և՛ Եսսեկս դքսության  
մի մասը՝ 217.030 հոգի բնակչությամբ, գրում է. «Անհավասա-  
րությունը բացառիկ դեպքերով չի սահմանափակվում: Ավելի  
պակաս չափով այն դոյություն ունի ամբողջ ընտրական սխտե-  
մում. շատ ընտրական կուրիաներ յերկու կամ յերեք անգամ  
ավելի մեծ են, քան ուրիշ շատերը»:

ԽՍՀՄ ընտրական որենքի այն կարուկ պահանջը, վորպեսզի  
Միության Խորհրդի ընտրության ժամանակ յուրաքանչյուր  
ընտրական ոկրուզ կազմվի 300 հազար բնակչության սկզբուն-  
քով՝ ամեն մի ոկրուզի համար, բացառում է ընտրական ոկրուզ-  
ների անհավասարությունը:

## ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» IV ԳՒՈՒՆ)

Ընտրական ոկրուզի մեջ մտնող քաղաքների ու շրջանների  
տերիտորիան բաժանվում է ընտրական շրջանների: Քվեներ ըն-  
դունելու և ձայները հաշվելու համար ընտրական շրջաններ կազ-  
մելու պարտականությունը դրված է քաղաքներում աշխատավո-  
րության պատգամավորների քաղաքային Խորհուրդների վրա,  
ուսյանական բաժանում ունեցող քաղաքներում՝ ինչպես որինակ՝  
Մոսկվայում— աշխատավորության պատգամավորների ուսյանա-  
կան Խորհուրդների վրա, և դյուղական վայրերում՝ աշխատավո-  
րության պատգամավորների շրջանային Խորհուրդների վրա  
(հոդվ. 26), վորոնք, իհարկե, գիտենալով տեղական պայման-  
ները, ամենալավ ձևով կարող են կազմել այդ շրջանները: Աշխա-  
տավորության պատգամավորների նշված Խորհուրդները պար-  
տավոր են ընտրական շրջանները կազմել վոչ ուշ, քան ընտրու-  
թյուններից 45 ուր առաջ: Դրանով ապահովվում է յուրաքան-  
չյուր ընտրական շրջանում ընտրողների ցուցակները ժամանակին  
ու լրիվ կազմելը, իսկ այդ ցուցակները, ինչպես ասացինք, վոչ  
ուշ քան, 30 ուր ընտրություններից առաջ պետք է հրատարակ-  
ված լինեն, վորպեսզի յուրաքանչյուր ընտրող իմանա, թե ինքը  
վոր շրջանի ցուցակն է մտցված և վորտեղ պետք է քվեար-  
կի:

Ընտրական շրջաններն ընդհանուր են կազմվում և՛ Միու-  
թյան Խորհրդի, և՛ Աղգությունների Խորհրդի ընտրություննե-  
րի համար (հոդվ. 25):

ժամանակին ընտրական շրջաններ կազմակերպելու, ինչպես և ժամանակին ընտրողների ցուցակները կազմելու և ընդհանուրի ղիտուեթյանը հասցնելու գործի հսկողութունը որենքը դնում է Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուդային հանձնաժողովների վրա (հոդվ. 44)․ կետեր՝ «ա» և «բ»):

Ընտրությունների իսկական ընդհանրութունն ապահովելու համար՝ ընտրական բյուլետեններն ընդունելու և հաշվելու, ընտրական շրջաններ կազմելու սխտեմը խոշոր նշանակութուն ունի: Մի շարք դեպքերում ընտրողների մասնակցութունն ընտրություններին կախված է նրանից, թե ինչպես է կառուցված ընտրական շրջանների ցանցը: Յեթե ընտրական շրջանը հեռույն գտնվում, շատ ընտրողներ չեն կարող գնալ քվեարկելու: Յեթե ընտրական շրջանը շատ մեծ է, այնտեղ կարող են մեծ թվով ընտրողներ հավաքվել, կառավարման հերթեր, հրհրոց ու անկարգութուն: «ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրութունը» նախատեսում է ամենալայն հնարավորութուն՝ ընտրական շրջանները հարմարեցնելու աշխարհագրական պայմաններին և այս կամ այն տերիտորիայի բնակչության խտությանը, վորով ընտրողների համար առավելագույն հարմարություններ է ապահովում: Յուրաքանչյուր ընտրական շրջանին բաժին ընկնող տերիտորիան վորոչվում է համաձայն այս կամ այն շրջանի բնակչության խտության, համաձայն ընտրողների այս կամ այն խմբի բնակավայրի առանձնահատուկ պայմանների:

28-33-րդ հոդվածներում մանրամասնորեն նշվում է, թե ինչպես են ստեղծվում ընտրական շրջանները: Յեթե գյուղխորհրդի տերիտորիայի բնակչության թիվը յերկու հազարից ավելի չէ, ապա, վորպես կանոն, այդ տերիտորիան կազմում է մեկ ընտրական շրջան: Սակայն, յուրաքանչյուր ստանիցայում, գյուղում, կիչլակում, աուլում, վորը 500 բնակիչ ունի, ստեղծվում է առանձին ընտրական շրջան:

Այն քաղաքները, արդյունաբերական կետերը, նույնպես և գյուղերն ու գյուղխորհուրդների տերիտորիաները, վորոնք 2

հազարից ավելի բնակիչ ունեն, բաժանվում են ընտրական շրջանների, այն հաշվով, վոր յուրաքանչյուր ընտրական շրջանին 1500-2500 բնակիչ ընկնի:

Զինվորական մասերն ու զորական միավորումները կազմում են առանձին ընտրական շրջաններ, առնվազն 50 և առավելն 1500 ընտրողների քանակությամբ: Այդ շրջանները մտնում են այն ընտրական ոկրուդի մեջ, վորտեղ գտնվում են ղինվորական մասերը, այդպիսով այդ ղինվորական մասերի կամ միավորումների ընտրողները ձայն են տալիս այն թեկնածուներին, վորոնք առաջադրված են այդ ընտրական ոկրուդում:

Ընտրական որենքը նախատեսում է ընտրական շրջանների կազմակերպում ավելի սակավաթիվ ընտրողներով, յերբ այդ պահանջում են ընտրողների շահերը՝ ընտրություններին նրանց մասնակցութունն ապահովելու համար:

Այսպես, հյուսիսային ու արևելյան հեռավոր շրջաններում, վորտեղ դերակշռում են մանր բնակավայրերը, առանձին շրջաններ կարող են կազմվել յուրաքանչյուր 100 բնակչի համար: Այդ շրջաններում բնակավայրերը բավական ցրված են և, վորպեսզի ընտրողներն իրենց ընտրական իրավունքը կենսագործելու համար ստիպված չլինեն մի քանի տասնյակ կիլոմետր ճանապարհ կտրել, որենքը հատկապես նախատեսում է այդ բացառությունը:

Ընտրական որենքը չի մոռացել նաև այն քաղաքացիներին, վորոնք ընտրությունների որը նավարկելիս կլինեն: Որենքն ապահովել է նրանց մասնակցութունը ևս Խորհրդային Միության գերագույն մարմինների ընտրություններին: Յուրաքանչյուր այդպիսի նավ, վոր առնվազն 50 ընտրող կուեննա (հաշվի առնելով ինչպես նավի անձնակազմը, այնպես էլ ուղեվորներին՝ ՍՍՀՄ քաղաքացիներին), կարող է կազմել առանձին ընտրական շրջան, վորը կմտնի այն ընտրական ոկրուդի մեջ, վորտեղ գորանցված է նավը:

Այն հիվանդանոցները, ծննդարանները, սանատորիաները,

հաշմանդամներին տները, վորոնք առնվազն 50 ընտրող ունեն, կադմում են առանձին ընտրական շրջաններ:

Ինչո՞ւ յե արված այս: Միթե՞ այդ հաստատութիւններում զանախող ընտրողները չեն կարող քվեարկել բոլորի համար ընդհանուր այն ընտրական շրջաններում, վորտեղ գտնվում են այդ ծննդարանները, հիվանդանոցները և այլն:

Այստեղ, ինչպես և ընտրական որենքի յուրաքանչյուր հողվածում, յերևում է ստալինյան հոգատարութեան արտահայտութիւնը դեպի մարդիկ: Վերահիշյալ հաստատութիւններում գտնվող շատ քաղաքացիների համար (հիվանդներ, հաշմանդամներ և այլն) դժվար, իսկ յերբեմն եւ անհնարին է դնալ ընդհանուր ընտրական շրջանը: Վորպեսդի նրանք եւ, վորպես լիբրալ քաղաքացիներ, կարողանան ընտրութիւններին մասնակցել, հենց այդ հիմնարկութիւններումն եւ պարտադիր կարգով ստեղծվում են ընտրական շրջաններ:

Ընտրական շրջանի բնակչութեան առավելագույն թիւը պետք է կադմի 2500 հոգի: Վորովհետեւ քվեարկութիւնը տեղի յե ունենալու 18 ժամ անընդհատ, հենց զրանով եւ ապահովված է հերթեր չդոյանալը:

Որենքն ընտրուի համար մի եյական հարմարութիւն եւ է ապահովում. Միութեան Խորհրդի և Աղգութիւնների Խորհրդի ընտրութիւններին մասնակցելու համար ընտրողը պետք է գնա միայն մեկ անգամ ու մեկ տեղ, վորովհետեւ յուրաքանչյուր ընտրական շրջան ընդհանուր է յերկու պալատների ընտրութիւնների համար եւ և յերկու պալատների ընտրութիւնները տեղի յեն ունենում միևնույն ուրը, ըստ վորում, յուրաքանչյուր ընտրող պետք է գցի յերկու բյուլետեն:

Դրութիւնը մի քիչ ավելի բարդ կլինի միայն այն միութենական հանրապետութիւններում, վորոնց կադմի մեջ մտնում են ավտոնոմ հանրապետութիւններ, կամ ավտոնոմ մարզեր և կամ աղղային ոկրուչներ: Այդպիսի դեպքերում յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետութիւն պետք է բաժանվի 11 ընտրական ոկրուչի ևս, յուրաքանչյուր ավտոնոմ մարզ՝ 5 ոկրուչի և յուրա-

քանչյուր աղղային ոկրուչ իրենից պետք է ներկայացնի մեկ ընտրական ոկրուչ: Այդպիսով, տվյալ ավտոնոմ հանրապետութեան, կամ ավտոնոմ մարզի և կամ աղղային ոկրուչի յուրաքանչյուր ընտրող մեկ ընտրական բյուլետեն պիտի գցի Միութեան Խորհրդի ընտրութեան համար, մեկ բյուլետեն՝ Աղղութիւնների Խորհրդի ընտրութեան համար՝ տվյալ միութենական հանրապետութեան ընտրական ոկրուչից և մեկն եւ՝ Աղղութիւնների Խորհրդի ընտրութեան համար՝ տվյալ ավտոնոմ հանրապետութեան ընտրական ոկրուչից, կամ տվյալ ավտոնոմ մարզի ընտրական ոկրուչից և կամ տվյալ աղղային ոկրուչի ընտրական ոկրուչից: Գործնականում յերեք բյուլետենից ավելի վոչ մի ընտրող չի գցելու, քանի վոր Միութեան տերիտորիայում չկա այնպիսի ավտոնոմ հանրապետութիւն, վորն իր մեջ ավտոնոմ մարզ կամ աղղային ոկրուչ ունենա:

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» V ԳՂՈՒՅ)

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների կատարման համար ստեղծվում են ընտրական հանձնաժողովներ:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների ընտրական հանձնաժողովների Փունկցիաները իստ կարելիոր են, սակայն սահմանափակվում են միայն ընտրական որենքի անչեղ ու ճշգրիտ իրականացումն ապահովելու խնդիրներով— թեկնածուների զըրանցման, ընտրական բյուլետենների առաքման, ընտրողներից բյուլետենների ընդունման, ձայների հաշման, ընտրական որենքի կատարման հսկողութեան:

Ընտրական հանձնաժողովներն ուրիշ վորեւե Փունկցիաներ չեն կատարում և այլ վորեւե իրավունք նրանց չի տրվում: Նրանք իրենք չեն կարող թեկնածուներ առաջադրել, չեն կարող ընտրողներին խորհուրդ տալ այս կամ այն թեկնածույին քվեարկել. նրանք չեն կարող հրաժարվել որինական կարգով առաջադրված թեկնածութիւնը զրանցելուց, չեն կարող մերժել զրանցված

Թեկնածույին բյուլետենի մեջ մտցնել: Ընտրական հանձնաժողովները չունեն և չեն կարող ամենափոքր իսկ ազդեցութիւն ունենալ ընտրողների կամքի վրա, որինական կարգով սահմանված ազատորեն թեկնածուներ առաջադրելու վրա, թեկնածուների ոգտին ազիտացիա մղելու վրա, ընտրութիւնների արդիւնքների վրա:

Ընտրական հանձնաժողովների ամբողջ ցանցի կառուցման հիմնական առանձնահատկութիւնն է— ընտրական հանձնաժողովների Փոնկցիաները հասարակական կազմակերպութիւնների և աշխատավորների ընկերութիւնների ներկայացուցիչների վրա դնելը, վորով յերաշխաւորվում է իսկական ժողովրդական հսկողութիւնն ընտրութիւնների կատարման վրա ու մանավանդ ձայները հաշվելու վրա, կանխվում է չարաչաճման վորևէ հնարավորութիւն: Բոլոր ընտրական հանձնաժողովները՝ վերից վար կազմվում են հասարակական կազմակերպութիւնների ու աշխատավորների ընկերութիւնների ներկայացուցիչներից և հաստատվում են համապատասխան միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդների նախագահութիւնների և աշխատավորութիւնի պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից:

ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի ընտրութիւնները կատարելու համար կազմակերպվում են՝ 1) ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի ընտրութիւնների Կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2) Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնների ընտրական հանձնաժողովներ յուրաքանչյուր միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնում, ավտոնոմ մարզում և ազդային ոկրուզում, 3) Միութիւնի Խորհուրդի ընտրութիւնների ոկրուզային ընտրական հանձնաժողովներ՝ Միութիւնի Խորհուրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուզում, 4) Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնների ոկրուզային ընտրական հանձնաժողովներ՝ Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնի յուրաքանչյուր ընտրական ոկրուզում, 5) Շրջանային ընտրական հանձնաժողովներ:

ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի ընտրութիւնների Կենտրոնական

ընտրական հանձնաժողովը պարսաւոր է ամբողջ ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա հսկել, վոր ընտրութիւնների ընթացքում անչեղորեն կատարվեն «ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի ընտրութիւնների կանոնադրութիւն» պահանջները: Այդ նույն հանձնաժողովը վերջին իրավասու մարմինն է հանդիսանում, վոր քննում է ընտրական հանձնաժողովների անճիշտ դործողութիւնների դեմ հարուցված դանդառները:

Միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է, վոր սահմանում է ընտրական քվեատուների ձևը, «քվեարկութիւնի իրավունքի վկայականի» ձևը, ընտրական բյուլետենների և նրանց ծրարների ձևն ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, քվեները հաշվելու արձանագրութիւնի ձևը, ընտրված լինելու վկայականի ձևը:

Այս բոլոր հարցերի կենտրոնացումը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձեռքում՝ ապահովում է «ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի ընտրութիւնների կանոնադրութիւն» պահանջների կատարման միասնութիւնը և ընտրութիւնների կանոնավորութիւնը:

Ազգութիւնների Խորհուրդի՝ միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների, ավտոնոմ մարզերի, ազդային ոկրուզների ընտրական հանձնաժողովները տվյալ հանրապետութիւնի, մարզի, ազդային ոկրուզի տերիտորիայում հսկում են ընտրական որենքի անչեղ կատարմանը Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնների ընթացքում և քննութիւնն են առնում Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնների միջոցին տեղի ունեցած անկանոն արարքների մասին հարուցված բողոքները:

Ինչպես Միութիւնի Խորհուրդի, այնպես եւ Ազգութիւնների Խորհուրդի ընտրութիւնների Ոկրուզային ընտրական հանձնաժողովները դրանցում են առաջադրված պատգամավորութիւնի թեկնածուներին, Շրջանային ընտրական հանձնաժողովներին մատակարարում են սահմանված ձևի ընտրական բյուլետեններ ու ծրարներ, հաշվում են ձայները, վորոշում են ընտրութիւնների արդիւնքն ոկրուզում, ընտրված թեկնածույին վկայական են

տալիս ընտրվելու մասին, ընտրությունները գործադարությունը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովները համապատասխանորեն ներկայացնում են Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետական կամ ավտոնոմ մարզի հանձնաժողովին:

Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովները բացի այդ՝ հսկում են, վոր աշխատավորության պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեները ժամանակին կազմակերպեն ընտրական շրջաններ և հետևում են ընտրողների ցուցակները ժամանակին կազմելուն ու ընդհանուրի գիտությանը հասցնելուն:

Ինչպես արդեն ասացինք, Միության Խորհրդի ընտրությունների շրջանային հանձնաժողովներն ընդհանուր են նաև Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար, ճիշտ այդպես էլ ընտրողների ցուցակները միևնույն են յերկու պալատների ընտրությունների համար: Ժամանակին Շրջանային ընտրական հանձնաժողովներ կազմակերպելու և ընտրողների ցուցակներ կազմելու գործի հսկողությունը Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովի հետ միասին նաև Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովին հանձնարարելը նպատակահարմար չէր լինի, վորովհետև նախ՝ այդ կատեղծեր գլխադրվելու, աշխատանքի համար անձնական պատասխանատվության բացակայություն, և յերկրորդ՝ գործնականապես էլ չափազանց դժվար կլիներ, վորովհետև Միության Խորհրդի ընտրությունների ոկրուզների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ոկրուզների տերիտորիաները չեն գուղադրվում իրար:

Վերահիշյալ աշխատանքը յերկու ոկրուզային հանձնաժողովներից ալիլի նպատակահարմար և հանձնարարել Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովին, ինչպես և արված է որևէրում:

Շրջանային ընտրական հանձնաժողովներն ընտրական շրջան-

ներում ընդունում են ընտրական բյուլետենները, հաջվում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր թեկնածույի ստացած քվեները, գործադարությունը հանձնում են Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների համապատասխան Ոկրուզային հանձնաժողովներին:

Այսպիսով, Միության Խորհրդի ընտրությունների գծով գործում են հետևյալ հանձնաժողովները. 1) կենտրոնական (վորը միաժամանակ Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար է), 2) Միության Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովներ և 3) Շրջանային (վորոնք միաժամանակ Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար են):

Ազգությունների Խորհրդի ընտրությունների գծով գործում են. 1) Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական հանրապետության, ավտոնոմ հանրապետության, ավտոնոմ մարզի, աղղային ոկրուզի ընտրական հանձնաժողովները, 2) Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովները և 3) Շրջանային հանձնաժողովները (վորոնք միաժամանակ Միության Խորհրդի ընտրությունների համար են):

«ՌՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» V գլուխը մանրամասնորեն վորոշում է յուրաքանչյուր հանձնաժողովի կազմելու ժամկետը, նրանց կազմը, հաստատման կարգը, աշխատանքի կարգը, հանձնաժողովի նիստերի քվորումը, հարցերի լուծման կարգը և այլն:

Հետաքրքրական է «ՌՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» համաձայն ընտրական հանձնաժողովներ կազմելու կարգը և նրանց կազմը համեմատել Ֆրանսիայի ընտրական հանձնաժողովների հետ:

1927 թվի որևէքի համաձայն Ֆրանսիայում ղեկարտամենտի ղլխավոր քաղաքում ստեղծվում է ընտրական հանձնաժողով՝ հենց պատգամավորության թեկնածուներից կամ նրանց լրագորներից՝ քաղաքացիական զատարանի նախագահի կամ նրա կողմից

նշանակված դատավորի նախագահութեամբ, փոստային գլխավոր հարկահավաքի կամ նրա ոչնականի և դատարանի ավագ քարտուղարի մասնակցութեամբ: Թեկնածուներից ու չինովնիկներից այդ կարգով կազմված հիշյալ հանձնաժողովի պարտականութիւնն է՝ տպագրել ու բաշխել ընտրական բյուլետեններն ու թեկնածուների բոլոր շրջաբերականները:

Բոլոր ընտրական ուղղուղների քվեները հաշվում են դեպարտամենտի գլխավոր քաղաքում, այն հանձնաժողովի կողմից, վոյբաղկացած է քաղաքացիական դատարանի նախագահից և դեպարտամենտի գլխավոր խորհրդի ամենամեծ ծառայութեան ըստած ունեցող չորս անդամներից:

Մեր ընտրական հանձնաժողովների և Փրանսիական ընտրական հանձնաժողովների համեմատութեանը մի անգամ ևս ցույց է տալիս սոցիալիստական դեմոկրատիայի առավելութեանը:

Նշենք, վոր ըստ մեր ընտրական որենքի՝ առաջադրված թեկնածուները չեն կարող ուղղուղային ու շրջանային ընտրական հանձնաժողովի անդամ լինել այնտեղ, վորտեղ նրանք պատգամավորութեան թեկնածու չեն առաջադրված: Սոցիալիստական ընտրական որենքի այս պահանջները ևս նպատակ ունեն մեր յերկրի յուրաքանչյուր ընտրողի համար ապահովել իր կամքի ազատ արտահայտումը:

### ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» VI ԳԼՈՒԽ)

Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածու առաջադրելու կարգն ընտրութեանները կատարելու կարևորագույն հարցն է: Ինչպե՞ս է լուծում այդ հարցը մեր ընտրական որենքը:

ԽՍՀՄ Սահմանադրութեան 141-րդ հոդվ. համաձայն «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեանների կանոնադրութեանը» սահմանում է, վոր մեզ մոտ թեկնածուներն առաջադրվում են ըստ քվեարկների: Յուրաքանչյուր սկրուզում ընտրվում է միայն

սեկ պատգամավոր, ընտրված է համարվում միայն նա, ում ձայների բացարձակ մեծամասնութիւնն է ստացել:

Տվյալ ընտրական ուղղուղում պատգամավորութեան թեկնածուներ կարող են առաջադրվել անսահմանափակ թվով, և թեկնածու առաջադրելու իրավունքը որենքը վերապահում է բոլոր այն հասարակական կազմակերպութեաններին և աշխատավորներին ընկերութեաններին, վորոնք նշված են Սահմանադրութեան 141-րդ հոդվածում— կոմունիստական կուսակցական կազմակերպութեաններին, պրոֆմիլութեաններին, կոոպերատիվներին, յերիտասարդական կազմակերպութեաններին, կուլտուրական ընկերութեաններին և սահմանված որինական կարգով գրանցված մյուս կազմակերպութեաններին: Բացի այդ կազմակերպութեաններից և ընկերութեաններից՝ թեկնածուներ առաջադրելու իրավունք է վերապահվում ձեռնարկութեանների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովներին, կարմիր բանակայինների ժողովներին— զինվորական մասերում, գյուղացիների ընդհանուր ժողովներին— կուլտուրատեութեաններում և խորհրատեսութեաններին— կուլտուրատեութեաններին ընդհանուր ժողովներին — խորհրատեսութեաններում:

Սրա մասին ընտրական որենքում ստված է.

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը ԽՍՀՄ-ի Սահմանադրութեան 141-րդ հոդվածի հիման վրա ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպութեաններին և ընկերութեաններին՝ կոմունիստական կուսակցական կազմակերպութեաններին, արհեստակցական միութեաններին, կոոպերատիվներին, յերիտասարդութեան կազմակերպութեաններին, կուլտուրական ընկերութեաններին և այլ կազմակերպութեանների համար, վորոնք գրանցված են որենքով սահմանված կարգով» (հոդվ. 56):

«Թեկնածու առաջադրելու իրավունքն իրականացնում են աշխատավորների հասարակական կազմակերպութեանների և ընկերութեանների ինչպես կենտրոնական որդանները, նույնպես և նրանց հանրապետական, յերկրային, մարզային ու շրջանային

որդանները, հավասարապես և բանվորներին ու ծառայողներին ընդհանուր ժողովները ձեռնարկութուններում, կարմիր բանակայինների ընդհանուր ժողովները— զորամասերում, ինչպես՝ և զյուզացիների ընդհանուր ժողովները— կոլտնտեսութուններում, խորհանտեսութունների բանվորներին ու ծառայողներին ընդհանուր ժողովները— խորհանտեսութուններում» (հոդվ. 57) :

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութունների Միութեան Գերագույն Խորհրդի ընտրութունների կանոնադրութեան» 56-րդ և 57-րդ հոդվածները մտցրել է ընկեր Ստալինը : Խորհրդային սոցիալիստական դեմոկրատիզմի զարգացման գործում այդ հոդվածները վիթխարի նշանակութուն ունեն : Նրանք ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար ընդարձակում ու յերաշխափորում են իսկական խորհրդային սոցիալիստական դեմոկրատիա և կյանքում մարմնացնում են Ստալինյան Մեծ Սահմանադրութեան սկզբունքները՝ մեր յերկրում ընտրական սիստեմի դեմոկրատացման մասին : Այսպես լայնորեն, իսկական դեմոկրատիկ ձևով երուծում ԽՍՀՄ ընտրական որենքը՝ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու հարցը : Թեկնածուներ առաջադրելու իրավունքը վոչ մի բանով չի սահմանափակվում : Որենքը թեկնածուներին վոչ մի առանձին պահանջ չի առաջադրում, բացի քաղաքական իրավունակութունից (այսինքն՝ պահանջ, վոր թեկնածուն ընտրական իրավունքներից զրկված չլինի) :

Հարց է ծագում. ինչպե՞ս անել զանազան կրոնական միավորումների հետ : Վերապահում է նրանց արդյոք մեր սոցիալիստական ընտրական որենքը պատգամավորութեան թեկնածուներ առաջադրելու իրավունքը : Այդ հարցին անհրաժեշտ է տալ բացասական պատասխան :

Ընդհանրապես՝ կարելի՞ յե արդյոք կրոնական միավորումները համարել հասարակական կազմակերպութուններ, վոր նախատեսված են Ստալինյան Սահմանադրութեան 126 հոդվածով : Հասկանալի յե, վոր վոչ :

Ստալինյան Սահմանադրութեան մեջ ասված է .

«Աշխատավորութեան շահերի համապատասխան և ժողովրդա-

կան մասսաների կազմակերպչական ինքնադործունեյութեան զարգացման ու քաղաքական ակտիվութեան նպատակներով ԽՍՀՄ քաղաքացիներին ապահովվում է իրավունք համախմբվելու հասարակական կազմակերպութուններում . . . » (հոդվ. 126) :

Կրոնական միավորումներն աշխատավորութեան շահերին չեն համապատասխանում և բոլորովին նպատակ ել չեն հետապնդում զարգացնելու ժողովրդական մասսաների կազմակերպչական ինքնադործունեյութունն ու քաղաքական ակտիվութունը : Այդ միավորումներն իրենց դործունեյութեամբ սահմանափակվում են բացառապես «իրենց կրոնական պահանջները բավարարելու» նպատակներով :

Սրանից հետևվում է, վոր ամեն տեսակի տերտերական, աղանդավորական և դրանց նման հակահասարակական ու հակակուլտուրական համայնքները, խմբերը կամ խմբակներն աշխատավորութեան Խորհուրդների պատգամավորութեան թեկնածուներ առաջադրելու իրավունքով չեն ողտվում :

Յուրաքանչյուր առաջադրված թեկնածու պետք է գրանցվի կամ Միութեան Խորհրդի ընտրութունների Ոկրուզային ընտրական հանձնաժողովի կողմից կամ Աղդութունների Խորհրդի ընտրութունների Ոկրուզային ընտրական հանձնաժողովի կողմից, նայած նրան, թե այդ թեկնածուն վոր պալատի համար է առաջադրված :

Թեկնածուներ առաջադրած աշխատավորների հասարակական կազմակերպութունները կամ ընկերութունները պարտավոր են նրանց գրանցել վոչ ուշ, քան ընտրութուններից 30 որ առաջ (հոդվ. 59) :

Որենքը սահմանում է, վոր Ոկրուզային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորութեան այն բոլոր թեկնածուներին, վորոնք առաջադրվել են աշխատավորների հասարակական կազմակերպութունների և ընկերութունների կողմից, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրութեան և «Գերագույն Խորհրդի ընտրութունների կանոնադրութեան» պահանջները (հոդվ. 60) :

Այդպիսով, ինչքան թեկնածուներ ել աշխատադորներ չա-  
տարակազմ կազմակերպութիւններ ի և ընկերութիւններ ի կող-  
մից առաջադրվեն, — ընդ վորում պահպանած լինելով որենքի  
բոլոր պահանջները, — նրանք բոլորն ել կըրանցվեն, այդ բոլոր  
զրանցված թեկնածուները պետք է մտցվեն ընտրական բյուրեան-  
նի մեջ:

Թեկնածու լին զրանցելուց մերժումը կարելի չէ բողոքար-  
կել այն կարգով, վոր մատնանշված է «ՍՍՀՄ Գերագույն Սոր-  
հրդի ընտրութիւնների կանոնադրութիւն» 64, 65 հոդվածնե-  
րում:

Մեր ընտրական որենքը ճիշտ սկեռում է նաև այն վոչ բարդ  
պահանջները, վորոնց պահպանումն անհրաժեշտ է թեկնածուների  
զրանցման համար: Այդ պարզ և հասկանալի պահանջները թված  
են ընտրական որենքի 61-րդ հոդվածում:

«Աշխատավորների այն հասարակական կազմակերպութիւն-  
ները կամ ընկերութիւնները, վորոնք ՍՍՀՄ Գերագույն Սորհր-  
դի պատգամավորութիւն թեկնածու չեն առաջադրում, պարտա-  
վոր են ներկայացնել Ոկրուգային ընտրական հանձնաժողովին հե-  
տեվյալ փաստաթղթերը:

ա) Պատգամավորութիւն թեկնածու առաջադրած ժողովի  
կամ նիստի արձանագրութիւնը, վորն ստորագրված է լինում  
նախագահութիւն անդամների կողմից և վորի մեջ նշված է լի-  
նում նրանց տարիքը, բնակավայրը, թեկնածու առաջադրած կազ-  
մակերպութիւն անվանումը, մատնանշված է լինում պատգամա-  
վորութիւն թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի տեղը,  
մամանակը և մատնակիցների թիվը, ընդ վորում արձանագրու-  
թիւն մեջ պետք է մատնանշված լինեն պատգամավորութիւն  
թեկնածու լի ազանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնա-  
կավայրը, կուսակցականութիւնը, զբաղմունքը:

բ) Պատգամավորութիւն թեկնածու չի հայտարարութիւնը,  
թե ինքը համաձայն է քվեարկվելու տվյալ ընտրական սկրու-  
զում՝ իրեն առաջադրած կազմակերպութիւն կողմից:

Ինչպես յերևում է, մեր ընտրական որենքին խորթ են ամեն

ուսակի «խորամանկութիւններ» և ընտրական տեխնիկայի խճճ-  
վածութիւն:

Անհրաժեշտ է միայն, վորպեսզի թեկնածու առաջադրած ժո-  
ղովի կամ նիստի արձանագրութիւն մեջ մատնանշված լինեն թեկ-  
նածու լի անունը, ազանունը, կուսակցականութիւնը, բնակա-  
վայրը, զբաղմունքը, նաև, վորպեսզի ինքը՝ թեկնածու չի բեն  
համաձայնութիւնը տա քվեարկվելու տվյալ ընտրական սկրու-  
զում: Վերջին հանդամանքը շատ կարևոր է, վորովհետև «Կանո-  
նադրութիւն» 62 հոդվ. մատնանշում է, վոր յուրաքանչյուր  
պատգամավոր կարող է քվեարկվել միայն մեկ սկրուզում:

Եթե թույլ տրվի յուրաքանչյուր պատգամավորին քվեարկ-  
վելու տասնյակ սկրուզներում կամ թեկնող յերկու սկրուզում և  
նրան իրավունք վերապահվի միայն ընտրութիւններից հետո վո-  
րոշել, թե նա վոր սկրուզից է ցանկանում ընտրված համարվել,  
ապա այդ կնշանակի նոր ընտրութիւնների անհրաժեշտութիւն  
ստեղծել բոլոր մյուս սկրուզներում, վորտեղ տվյալ պատգամա-  
վորը նույնպես ընտրվել էր: Այդ կրկնակի քվեարկութիւնից խու-  
սափելու նկատառումով որենքը յուրաքանչյուր թեկնածու լին ի-  
րավունք է տալիս քվեարկվելու միայն մի սկրուզում:

Գերագույն Սորհրդի պատգամավորութիւն թեկնածուները  
չեն կարող լինել Միութիւն Սորհրդի ընտրութիւնների և Ազգու-  
թիւնների Սորհրդի ընտրութիւնների՝ Ոկրուգային ընտրական  
հանձնաժողովների, ինչպես նաև Շրջանային ընտրական հանձնա-  
ժողովների անդամներ այն սկրուզում, վորտեղ նրանք առա-  
ջադրված են վորպես պատգամավորութիւն թեկնածուներ  
(հոդվ. 58): Դրանով ապահովվում է ընտրական հանձնաժողովի  
աշխատանքի անաչառութիւնը:

Ինչպես արդեն մատնանշվեց, աշխատավորների հասարակա-  
կան կազմակերպութիւնները և ընկերութիւնները պատգամա-  
վորութիւն առաջադրված թեկնածուներին պարտավոր են զը-  
րանցել վոչ ուշ, քան ընտրութիւններից 30 օր առաջ:

Ընտրութիւններից 25 օր առաջ Ոկրուգային ընտրական

հանձնաժողովները (ինչպես Միության Խորհրդի ընտրությունների, այնպես և Աղբյուրյունների Խորհրդի ընտրությունների) հրապարակում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յուրաքանչյուր պահանջված պատգամավորության թեկնածույի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածույին առաջադրող հասարակական կազմակերպության անվանումը (հոդվ. 65) :

Այդպիսով ընտրություններից 25 որ առաջ քաղաքացիներն արդեն կարող են իմանալ, թե ինչպիսի թեկնածուներ են առաջադրված Միության Խորհրդի ընտրությունների տվյալ ընտրական ոլորտում և Աղբյուրյունների Խորհրդի ընտրությունների ընտրական ոլորտում :

Ոկրուդային ընտրական հանձնաժողովը պարտավոր է վոչ ուշ, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպագրել և բոլոր շրջանային ընտրական հանձնաժողովներին ուղարկել ընտրական բյուլետենները : Այդ բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուդի արգարնակչության լեզվով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևով :

Որենքը նույնպես խոր դեմոկրատական կերպով է վորոչում ազիտացիայի իրավունքի հարցը :

«Կանոնադրության» 70-րդ հոդվ. ասում է .

«Յուրաքանչյուր կազմակերպության համար, վորն առաջադրել է Ոկրուդային ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածույին, հավասարապես և ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար իրավունք է ասպհովվում անարգել կերպով ազիտացիա մղելու այդ թեկնածույի ոպտին ժողովներում, մամուլում, և այլ յեղանակներով, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 125 հոդվածի» :

Ինչպես հայտնի յե, այդ հոդվածը ԽՍՀՄ քաղաքացիներին յերաչխավորում է մամուլի, ժողովների, միտինգների և ցույցերի ազատություն՝ սոցիալիստական իրավակարգն ամրացնելու և աշխատավորների շահերն ապահովելու նպատակներով : Այս

վերջին ցուցումը բնորոշ և խորհրդային իրավակարգի համար, բանվոր դասակարգի դիկտատուրայի համար :

Մեր նոր ընտրական որենքի 70-րդ հոդվածը նախատեսում է յերաչխավորում է այն ընտրական պայքարի իրադործումը, վորի մասին ընկեր Ստալինն ասել է Ռոյ-Հովարդի հետ ունեցած իր գրույցի մեջ .

«Ձեզ թվում է, թե չի լինի ընտրական պայքար : Սակայն դա կլինի, և յես նախատեսում եմ շատ աշխույժ ընտրական պայքար : Մենք քիչ հիմնարկություններ չունենք, վորոնք վատ են դործում : Պատահում է, վոր իշխանության այս կամ այն տեղական որդանը չի կարողանում բավարարել քաղաքի և գյուղի աշխատավորների բազմակողմանի և ավելի ու ավելի աճող պահանջներից մեկը կամ մյուսը : Կառուցե՞լ ես դու, արդյոք, թե չե՞ս կառուցել յավ դպրոց : Բավարարե՞լ ես դու, արդյոք, բնակարանային պայմանները : Բյուրոկրատ չե՞ս, արդյոք, դու : Ոգնե՞լ ես, արդյոք, դու մեր աշխատանքն ավելի եֆֆեկտիվ, մեր կյանքն ավելի կուլտուրական դարձնելու : Այդպիսիք կլինեն այն չափանիշները, վորոնցով միլիոնավոր ընտրողները կմոտենան թեկնածուներին, դեն չպրտելով անպետքներին, ջնջելով նրանց ցուցակներից, առաջ քաշելով ավելի լավերին և դնելով նրանց թեկնածությունները : Այո, ընտրական պայքարն աշխույժ կլինի, նա կընթանա բազմաթիվ ամենասուր հարցերի շուրջ . ժողովրդի համար առաջնակարգ նշանակություն ունեցող՝ գլխավորապես դործնական հարցերի»<sup>1)</sup> :

Մեր ընտրական որենքը, վորի հիմնական առանձնահատկությունը հանդիսանում է նրա հետևողականորեն, մինչև վերջ պահպանված սոցիալիստական դեմոկրատիան, խորհրդային ժողովրդին տալիս է բոլոր հնարավորությունները ստուգելու յերկրի դեկավարներին : Ընկեր Ստալինն ասում է . «Խորհրդային Միության իշխանության որդանների ընտրությունների ժամա-

<sup>1)</sup> Ընկ. Ստալինի գրույցն Ամերիկյան «Մկրիպուս-Հովարդ-Նյուս-Պիպերս» շրտգրական միավորման նախագահ պարոն Ռոյ Հովարդի հետ, 1930 թ. մարտի 1-ին, յերես 23 :

նակ ժողովուրդն ստուգում և յերկրի ղեկավարներին ընդհանուր, հասլասար, ուղղակի և դաշտնի քվեարկության միջոցով»<sup>1)</sup>

Մեր ընտրական պայքարը վոչ մի ընդհանուր բան չունի դանազան կուսակցությունների և հասարակական խմբերի այն պայքարի հետ, վոր տարվում և արտասահմանում:

Բուրժուական գիտնական Ջեմս Բրայսը, նկարագրելով ԱՄՆահանգները ընտրական «մեխանիկան», պարզապես հայտարարում և, վոր «Ձանազան կեղծիքները, ինչպես, որինակ, ընտրական ցուցակների մեջ մտցնել այնպիսի անձանց, վորոնք իրավունք չունեն ընտրություններում մասնակցելու, կամ տված ձայների վոչ ճիշտ հաշվելը, սովորական յերեվույթ են համարվում վոչ միայն քաղաքային ընտրությունների, այլև շտատների ու Փեդերալ կառավարման պաշտոնյաների ընտրության ժամանակ»:

ԱՄՆ նախկին սենատոր Պետիզրյուն, վորն անցել և բուրժուական քաղաքականության «խոհանոցով» և սեփական անձի վրա փորձել և բուրժուական դեմոկրատիայի «մեխանիզմը», հրապարակորեն ասում Եր, վոր ԱՄՆ-ում «սենատում տեղեր զենել այնքան սովորական բան և դարձել, վոր արդեն վոչ վոքի ուշադրությունը չի դրավում: Յեվ այլ կերպ ինչպե՞ս կարող և լինել, — բացականչում և Պետիզրյուն, — յեթե Միացյալ Նահանգների նախարահի բաղկաթոռն աղբային հանրապետական համագումարում աճուրդով Եր վաճառվում և մնաց նրան, ով ավելի շատ վճարեց»:

Պետք և համեմատել սոցիալիստական պետության ընտրական որենքով նախատեսված կարգը, վորն աշխատավորների լայն մասսաներին հնարավորություններ և տալիս նրանց ցանկացած թեկնածուին առաջադրել և պայքարել նրա համար, բուրժուական յերկրներում թեկնածուներ առաջադրելու կարգի հետ: Մեր

Ահամանադրությունը չի ճանաչում ակտիվ և պասսիվ քաղաքացիների, — ամեն մի ընտրող 18 տարեկան հասակից սկսած կարող և ընտրել և կարող և ընտրվել: Բուրժուական յերկրների մեծ մասում, ինչպես մենք արդեն վերը տեսանք, ընտրվելու իրավունք տվող տարիքը զգալիորեն ավելի բարձր և, քան ընտրելու իրավունք տվող տարիքը, որինակ՝ 21 տարի և 30 տարի:

Անգլիայում համայնքների պալատի անդամության թեկնածույից պահանջվում և ներկայացնել 150 Փունտ ստերլինգ դրավական, վորը չի վերադարձվում, յեթե թեկնածուն ստանում և տված ձայների մեկ ութերորդից ավելի պակաս: Առանձնապես աչքի յե ընկնում տարբերությունը յերկրորդ պալատը կազմելու պրոցեսում: Ազգությունների Խորհրդի անդամության թեկնածուները, ինչպես և Միության Խորհրդի անդամության թեկնածուներն առաջադրվում են միևնույն հիմունքներով: Բուրժուական յերկրները յերկրորդ պալատները՝ ըստ ընդհանուր կանոնի՝ ռեակցիայի կենտրոն են ներկայացնում և կազմվում են, վորպես կանոն, «վոչ դեմոկրատիկ ճանապարհով, հաճախ նրա անդամներին վերելից նշանակելու միջոցով»:

Այսպես, Անգլիայի լորդերի պալատը <sup>7</sup>/<sub>8</sub> մասով բաղկացած և ժառանգական անդամներից, մնացածներն արտոնյալ միությունների ներկայացուցիչներ են հանդիսանում: Ճապոնիայում պերերի պալատը նշանակվում և:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում սենատի անդամը պետք և ունենա վոչ պակաս, քան 30 տարեկան հասակ: Փրանսիայում սենատորները համար սահմանված և 40 տարեկան հասակ (իսկ պալատի պատգամավորները համար — 25 տարեկան), սենատի ընտրություններն ինքնավարական մարմիններից անուղղակի յեն:

Բնորոչ և, վոր Փրանսիայում սենատորները միջին հասակը 64 տարին և:

ԽՍՀՄ յերկու պալատների լիազորությունների ժամկետներն ևլ միատեսակ են. նրանք միաժամանակ ընտրվում են և միաժա-

1) Ստալին — Կուսակցական աշխատանքի թեթրությունների և արոցիստական ու այլ յերկերեսանիններին լիկվիդացիայի յեթարկելու միջոցառումների մասին:

մանակ վերջացնում են իրենց աշխատանքը կամ արձակվում :

Մինչդեռ բուրժուական յերկրներում յերկրորդ պալատները սովորաբար ավելի «յերկարակյաց են», և այդպիսով նրա անդամներն էլ ավելի քիչ չափով են կախված ընտրողներից :

Որինակ, Փրանսիայում պատգամավորների լիազորութունը տևում է 4 տարի, սենատորինը՝ 9 տարի, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 2 և 6 տարի, Շվեդիայում՝ 4 և 8 տարի : Անգլիայում, ինչպես մենք արգեն ասացինք, լորդերը վոչ միայն ցմահ, այլև ժառանգականորեն վերին պալատի անդամներ են հանդիսանում :

Ընտրութունների համար չտիպողանց եյական է հանդիսանում այն հարցը, թե ո՞վ է կատարում ընտրութունները հետ կապված ծախսերը : ԵՎ-ըդ հոդվ. ասում է. «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութունները հետ կապված ծախսերը կատարվում են պետութան հաշվին» : Խորհրդային քաղաքացու համար այդ ինքնին հասկանալի յե հանդիսանում : Սակայն բուրժուական յերկրներում դործն այդպես չի դրված : Նույնիսկ այնպիսի առաջավոր բուրժուական-դեմոկրատական յերկրում, ինչպիսին Փրանսիան է, 1927 թ. հունիսի 21 որենքով ընտրական բյուրեղանները տպագրութան և առաքման ու հանձնաժողովի քարտուղարի վարձատրութան ծախսերը դրվում են թեկնածուների վրա : Ընտրական կամպանիան թեկնածույին շատ թանդ է նստում Անգլիայում, վորտեղ նրա վրա ընտրութունների հետ կապված բազմաթիվ ծախսեր են ընկնում : Այդ հանգամանքը դժվարացնում է պրոլետարական թեկնածուների առաջադրումը :

Բուրժուական – դեմոկրատական սահմանադրութունները հայտարարում են ազատութուն թեկնածուների ազիտացիայի համար :

Մենք գիտենք, թե ինչպես այդ ազատութունը հաճախ խախտվում է կոմունիստական կուսակցութան թեկնածուների նկատմամբ :

Կապիտալիստական իրավակարգի պայմաններում ազիտացիայի ազատութունը միայն ձևական իրավունք է հանդիսա-

նում : «Խոսում են խոսքի, ժողովների և մամուլի ազատութան մասին, բայց մոռանում են, վոր այդ բոլոր ազատութունները բանվոր դասակարգի համար դատարկ հնչյունի կարող են վերածվել, յեթե նա զրկված է հնարավորութունից իր տրամադրութան տակ ունենալու ժողովները համար հարմար շենք, լավ տպարաններ, բավական քանակով տպագրելու թուղթ և այլն» :<sup>1)</sup>

Ստալինյան Սահմանադրութունն աշխատավորների շահերի համապատասխան և սոցիալիստական իրավակարգի ամբապնդման նպատակներով ԽՍՀՄ քաղաքացիներին վոչ միայն ապահովում է խոսքի, մամուլի, ժողովների և միտինգների, փողոցային յերթերի ու ցույցերի ազատութուն, այլև քաղաքացիների այդ իրավունքները ռեալ կերպով ապահովվում են «աշխատավորներին և նրանց կազմակերպութուններին տրամադրելով տպարաններ, թվթի պաշար, հասարակական շենքեր, փողոցներ, փոխադրութան միջոցներ և նրանց իրականացնելու համար անհրաժեշտ այլ նյութական պայմաններ» (հոդվ. 125) :

Այդպիսով, միայն ԽՍՀՄ-ում է հնարավոր բարձրագույն մարմինների պատգամավորութան թեկնածուների համար անաչառ ազիտացիա մղելու իսկական, ռեալ ապահովված իրավունք՝ աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական իրավակարգն ամբապնդելու նկատառումներով :

Մեր կուսակցական, պրոֆմիտեկենական և կոմյերիտական կազմակերպութուններն ու աշխատավորների պատգամավորները Խորհուրդները պետք է բազմիցս անգամ ավելի ուժեղացնեն իրենց մասսայական-քաղաքական աշխատանքը, անդադար մերկացնեն և անխնա ջախջախեն տրոցկիստական-աջ սրիկաների և այլ լրտեսների, դիվերսանտների, Փաշիստական հետախուզութան դործակալների ու ժողովրդի այլ թշնամիների փորբադույն փորձերը՝ ընտրական կամպանիան ոգտադործել խորհրդային իրավակարգի սոցիալիզմի դործի դեմ :

1) Ստալին — Ձևկուցում ԽՍՀՄ Սահմանադրութան նախադի մասին :

# ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» V II ԳԼՈՒԽ)

Քննարկը ընտրութիւնները կատարվում են մի որովա ընթացքում, վորն ընդհանուր և ամբողջ ԽՍՀՄ համար, ընդ վորում այդ որը պետք և անպայման լինի վոչ աշխատանքային որ, վոր ապահովում և ընտրողների առավելագույն մասնակցութիւնը քվեարկութեանը:

Ընտրութիւններին որը սահմանում և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին Նախագահութիւնը վոչ ուշ, քան ընտրութիւններինց 2 ամիս առաջ, միաժամանակ հրապարակվում են ընտրական օկրուզներին ցուցակները:

Վորպեսզի յուրաքանչյուր ընտրող հաստատապես գիտենա ընտրութեան որը և տեղը, Շրջանային ընտրական հանձնաժողովները մինչ ընտրութիւնները մնացած 20 որվա ընթացքում ամեն որ նրանց մասին հրապարակում են մամուլում կամ մի վորեւ այլ միջոցով ազդարարում են ընտրողներին (հոդվ. 73):

Ընտրողներն իրենց ձայները տալիս են սկսած առավոտյան ժամը 6-ից և շարունակում են մինչև գիշերվա ժամը 12-ը:

Յեւրոպայի ժամանակակից բուրժուական յերկրներին մեծ մասում ընտրութիւնները կատարվում են կիրակի որերը, բայց Անգլիայում, որինակ, բանվորական որը, մինչև յերեկոյան ժամը 10-ը: Ընտրական բյուլետեններ ընդունելու համար սահմանված ժամանակին տեղի ունեննելու ամեն տեղ ել զգալիորեն ավելի ցածր և, քան մեր ընտրական որերնքով:

Որինակ, նախապատերազմյան Գերմանիայում քվեարկութիւնը կատարվում էր միայն 9 ժամվա ընթացքում: Ֆրանսիայում ներկայումս ընտրութիւնները կատարվում են առավոտյան ժամը 8-ից մինչև յերեկոյան ժամը 6-ը:

Սահմանելով, վոր քվեարկութիւնը կատարվում և վոչ-քանիւրական որ և այն ել 18 ժամվա ընթացքում (առավոտյան

ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը), ԽՍՀՄ ընտրական որերնքը յուրաքանչյուր ընտրողին հնարավորութիւն և տալիս իրագործելու իր ընտրական իրավունքը, վորովհետև ընտրական շրջանները, ինչպես մենք վերը մատնանշեցինք, կազմակերպված են այն հաշվով, վորպեսզի խորհրդային ընտրողի համար ապահովված լինեն առավելագույն հարմարութիւններ:

Ինչպե՞ս և կատարվում քվեարկութեան պրոցեսը: Շրջանային հանձնաժողովի նախագահը ճիշտ առավոտյան ժամը 6-ին հանձնաժողովի անդամների ներկայութեամբ պետք և նախ և առաջ ստուգել քվեատուսիները և դրանից հետո կնքել:

Այդ պահանջը մտցված և որերնքի մեջ ամեն տեսակի չարարկութիւններին հնարավորութիւնը վերացնելու նպատակով: Բուրժուական յերկրներին պարլամենտական ընտրութիւններին պատմութիւնը դիտե շատ դեպքեր, յերբ քվեատուսիները լցված են յեղել բյուլետեններով դեռ քվեարկութիւնն սկսվելուց առաջ:

Բյուլետեններին լրացնելը կատարվում և առանձին սենյակում, վորտեղ քվեարկութեան ժամանակ, ներառյալ նույնիսկ ընտրական հանձնաժողովների անդամներին, վոչ վոքի չի թույլատրվում ներկա գտնվելու, բացի ձայն տվողներից (հոդվ. 77): Այդ սենյակը պետք և սարքավորված լինի միջնորմներով կամ շիրմաներով, միաժամանակ ներս թողնվող ընտրողներին թվի համեմատ: Այդ կերպ որերնքն ապահովում և գաղտնի քվեարկութիւնը:

Յուրաքանչյուր ընտրող քվեարկութեան պետք և ներկայանա անձամբ և ներկայացնի անձնագիրը կամ պրոֆմիտութեան տոմսը, կոլտնտեսական դրքույկը կամ իրեն անձնավորութիւնը հաստատող այլ վկայական:

Ընտրողներին ցուցակով ստուգելուց և այնտեղ նշելուց հետո, ընտրողն ստանում և ընտրական բյուլետեն և սահմանված ձևի ծրար:

Որերնքի նշված պահանջների յուրաքանչյուրը հսկայական նշանակութիւն ունի ընտրութիւնների ճշտութիւնը յերաշխա-

վորելու համար: Որինակ՝ շատ յերկրներում ընտրական բյուրե-տեններն ուղարկվում են ընտրողի տունը, նա կարող է ներկա-յանալ արդեն լրացրած բյուրետենով կամ ընտրական բյուրոյի շենքում ստանալ այն և լրացնել: Պարզ է, վոր քվեարկության ազատությունը և դադանապահությունն ավելի մեծ չափով ա-պահովվում են այն ժամանակ, յերբ ընտրողը բյուրետենն ստա-նում է անմիջապես Շրջանային ընտրական հանձնաժողովում և լրացնում է այն սենյակում, վորտեղ բացի իրենից, վոչ վոք ի-րավունք չունի ներկա գտնվելու:

Որենքի այն ցուցումը, վորպեսզի ընտրողը ներկայանա անձամբ, վերացնում է հավատարմագրով, փոստով և այլ ձե-վով քվեարկելու հնարավորությունը, վորը դոյություն ունի մի քանի կապիտալիստական յերկրներում և չի ապահովում քվեար-կության վո՛չ ազատությունը, վո՛չ ել դադանապահությունը:

Բաղաքացիներին իսկական ազատություն և քվեարկության դադանապահություն ապահովելու կարգը ճիշտ սահմանված է մեր ընտրական որենքով, վորտեղ պարզ ասված է.

«Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, այդ նպա-տակով ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը, ընդ վորում ընտրողներն իրենց ձայները տալիս են ընտ-րական բյուրետենները փակ ծրարով քվեատուփի մեջ դրելով»:

«Ընտրությունների շենքում՝ բյուրետենները լրացնելու հա-մար հատկացվում է առանձին սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արդելվում է, բացի քվեարկողներից, վորեւ մեկի, ներառյալ նաև Շրջանային ընտրական հանձնաժողովների ան-դամների, ներկայությունը. բյուրետենները լրացնելու համար մի քանի ընտրողներ միաժամանակ ներս թողնելիս սենյակը պետք է ունենա միջնորդներ կամ շիրմաներ՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողներին թվի համեմատ» (հոդվ. 77):

Նրանց հաշվառումը, ովքեր «քվեարկելու իրավունքի վկա-յականով» ներկայանում են ընտրություններին, պետք է կատար-վի առանձին:

Այն սենյակը, վորտեղ ընտրական բյուրետենն է լրացվում,

ընտրողը ներ. է մտնում մենակ: Բացառություն է արվում մի-այն այն ընտրողի համար, վորն անդրադիտության կամ Փիղի-կական պակասությունների (որինակ կուրության) հետեւանքով առանց ուրիշի ոգնության ի վիճակի չէ լրացնելու ընտրական բյուրետենը: Այդպիսի ընտրող կարող է հրավիրել մի վորեւ այլ ընտրողի, վորին նա անվանում է իր նախատեսված թեկնածույի ազդանունը, իսկ մնացած ազդանունները հանձնարարում է բյու-րետենից ջնջել:

Բյուրետենը փակցնելով իրեն տրված ծրարի մեջ, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Շրջանային ընտ-րական հանձնաժողովը, և վերջինիս ներկայությամբ ընտրական բյուրետեն պարունակող ծրարը քվեատուփն է դրում:

Ընտրական որենքն այսպես է սահմանում այդ կարգը.

«Ընտրական բյուրետեն լրացնելու համար հատկացված սեն-յակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուրետենում թող-նում է այն թեկնածույի ազդանունը, վորին ձայն է տալիս ին-քը, ջնջելով մյուսներինը. բյուրետենները դնելով ծրարի մեջ և փակցնելով ծրարը, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Շրջանային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուրետեններ պարունակող ծրարը դրում է քվեատուփի մեջ» (հոդվ. 80):

Թողնելով բյուրետենի մեջ այն թեկնածույի ազդանունը, վո-րին նա ձայն է տալիս, ընտրողը դրանով իսկ ձայն է տալիս նրան:

Հետեւապես՝ ընտրողն անմիջականորեն ընտրում է Միու-թյան Սորհրդի պատգամավորին և Ազգությունների Սորհրդի պատգամավորին: Դրանով իսկ իրադործվում է ուղղակի ընտ-րական իրավունքի սկզբունքը, վորովհետև ՍՍՀՄ-ում ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներն անմիջականորեն մաս-նակցում են Սորհրդային Միության բարձրագույն մարմինների ընտրություններին: Մի շարք բուրժուական յերկրներում, հատ-կապես վերին պալատների ընտրությունների ժամանակ, դոյու-թյուն ունեն վոչ թե ուղղակի, այլ անուղղակի ընտրություններ,

այսինքն՝ քվեարկողներն ընտրում են վոչ թե պատգամավորներ, այլ ընտրողներ, և միայն վերջիններն են պատգամավոր ընտրում:

Հիմնականում այսպիսի ձևով էր կառուցված Պետական Դոմայի ընտրութիւնների ցարական ընտրական որենքը, ընդ վերում այդ անուղղակի ընտրութիւնները կառուցվում էին տասնյակ միլիոն աղքատահարկաւթյանը, հատկապէս ճնշված ազգութիւններին, ընտրական իրավունքներից զրկելու հիման վրա, մեկ կողմից կարվածատերերի, Փարբիկանտների, առեւտրականների, հոգեվորականութեան, կուլակների, և մյուս կողմից՝ բանվորների ու աշխատավոր դյուղացիութեան ներկայացուցչութեան ազգակող անհավասարութեան վրա: ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրութիւնը սահմանում է ուղղակի ընտրութիւններ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի, միութենական և ինքնավար հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդների, աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների համար:

Ընտրական շենքում քվեարկութեան ընթացքում ընտրական ազիտացիա չի թույլատրվում (հոդվ. 82): Որենքի այդ պահանջըն այնքան հասկանալի չէ, վոր բացատրութեան կարիք չի ըզգում:

Քվեարկութիւնն ավարտվում է ընտրութիւնների որվա դիչերը, ժամը 12-ին: Ճիշտ դիչերվա ժամը 12-ին նախագահը քվեարկութիւնն ավարտված է հայտարարում, հանձնաժողովն սկսում է բանալ քվեատուիերը:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

(«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» V III ԳԼՈՒԽ)

Ընտրութիւնների արդյունքները վորոշելու միջոցին վճռական նշանակութիւն ունի ձայների հաշվումը, վորը ընտրութիւնների մեջ դժվարագույն մոմենտներից մեկն է: «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութիւնների կանոնադրութեան մեջ

ձայներ հաշվելու կարգը մշակված է մինչև ամենափոքր մասնամասնութիւնները, վոր ապահովում է հաշվումի ճշգրտութիւնը և վերացնում է չարարկութիւնների հնարավորութիւնը:

Որենքով սահմանված կանոնի համաձայն ձայների հաշվումը բարկացած է յերկու մոմենտից: Սկզբում Շրջանային ընտրական հանձնաժողովը տրված բյուլետենների հիման վրա հաշվում է և արձանագրում ձայների թիվը, վոր ըստ ընտրական շրջանի տըրված են առանձին-առանձին Միութեան Խորհրդի յուրաքանչյուր թեկնածույի համար և առանձին՝ Ազգութիւնների Խորհրդի յուրաքանչյուր թեկնածույի համար:

Յերկրորդ մոմենտը՝ Միութեան Խորհրդի ընտրութիւնները Ոկրուգային հանձնաժողովները և Ազգութիւնների Խորհրդի ընտրութիւնների Ոկրուգային հանձնաժողովները, ստանալով շրջանային ընտրական հանձնաժողովների արձանագրութիւնները և նրանց մյուս նյութերը, այդ արձանագրութիւնների հիման վրա հաշվում են ձայների թիվը, վոր տրված է ամբողջ ոկրուգում յուրաքանչյուր թեկնածույին և վորոշում են ընտրութիւնների արդյունքներն ըստ ոկրուգի:

Քվեարկութեան տրդյունքները վորոշելու ամբողջ կարգի բնորոշ գիծը— դա լայն հրապարակայնութիւնն է: Հենց իրենք ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչներից, բայց դրանից դատ, ձայներ հաշվելու ժամանակ կարող են ներկա դտնվել հասարակայնութեան այդ նպատակով նշանակված հատուկ լիազորները:

Ի՞նչպէս է կատարվում ձայների հաշվումը Շրջանային և Ոկրուգային ընտրական հանձնաժողովներում:

Ձայների հաշվումը Շրջանային հանձնաժողովը կատարում է բաց. այնտեղ ներկա դտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպութիւնների և ընկերութիւնների՝ դրա համար հատկապէս լիազորված ներկայացուցիչները, ինչպէս նաև մամուլի ներկայացուցիչները:

Նախ և առաջ Շրջանային հանձնաժողովը դեցած ծրարների թիվը համեմատում է քվեարկութանը մասնակցած անձերի թվի հետ և ստուգման արդյունքները մտցնում է արձանագրության մեջ:

Շրջանային հանձնաժողովի նախագահը բաց է անում ծրարները և հրապարակում է քվեարկման արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի: Յուրաքանչյուր պատգամավորության թեկնածույի համար կազմվում է հաշվային թերթիկ յերկու որինակով՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից և Շրջանային ընտրական հանձնաժողովի՝ դրա համար լիազորված անդամների կողմից:

Քվեարկության արդյունքների գրանցումը կատարվում է առանձին-առանձին՝ ըստ Միութայն Սորհրդի ընտրությունների և ըստ Ազգությունների Սորհրդի ընտրությունների:

Անվավեր են ճանաչվում չսահմանված՝ ձևի և գույնի բյուլետենները, առանց ծրարի կամ չսահմանված ձևի ծրարով տրված բյուլետենները, այն բյուլետենները, վորոնք պարունակում են ընտրվելիք պատգամավորների թվից ավելի քեկնածուներ (հոդվ. 90):

Չսահմանված ձևի կամ գույնի բյուլետենները, չսահմանված ձևի ծրարները չեյին կարող ստացվել ընտրական հանձնաժողովից, առանց ծրարի բյուլետեն տալը խախտում է զաղտնի քվեարկության սկզբունքը:

Ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ պարունակող բյուլետեններն անվավեր են համարվում այն պատճառով, վոր՝ յեթե ընտրողը բյուլետենում թողել է մի քանի սզգանուններ, ապա ընտրական հանձնաժողովն ի վիճակի չե վորոշելու, թե այդ ընտրողն ում է կամեցել ձայն տալ:

Ընտրական բյուլետենի վավերականության նկատմամբ տարակուսանք ծագելու դեպքում հարցը լուծում է Շրջանային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկության միջոցով:

Չայնրի հաշվելը վերջանալուց հետո արձանագրություն և կազմվում և ստորագրվում 93-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հաշվումը վերջացնելուց և արձանագրությունը կազմելուց հետո հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ:

95, 96-րդ հոդվածներում մանրամասնորեն վորոշված են Շրջանային ընտրական հանձնաժողովների կողմից քվեարկության արձանագրությունների և հաշվումի թերթիկները Միութայն Սորհրդի ընտրությունների և Ազգությունների Սորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովներին ուղարկելու կարգը և ժամկետները, ընտրական բյուլետենների քվեարկության արձանագրության յերրորդ որինակի և կնիքի հետ միատեղ աշխատավորների պատգամավորների Սորհրդին ի պահպանումը հանձնելու կարգը և բյուլետենների պահպանման ժամկետները:

Շրջանային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված քվեարկության արձանագրությունների հիման վրա, Ոկրուզային ընտրական հանձնաժողովները նույնպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ այդ նպատակով հատուկ լիազորված ներկայացուցիչների ու մամուլի ներկայացուցիչների ներկայությամբ հաշվում են բոլոր ընտրական շրջանների քվեարկության արդյունքները:

Որենքը մանրամասնորեն սահմանում է Ոկրուզային ընտրական հանձնաժողովների հաշվային թերթիկներ տանելու և արձանագրություններ կազմելու կարգը (հոդվ. 100-102):

Հաշվումը վերջանալուց սկսած վոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում Միութայն Սորհրդի ընտրությունների Ոկրուզային և Ազգությունների Սորհրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովի նախագահները արձանագրության առաջին որինակը և հաշվային թերթիկներն ուղարկում է կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ արձանագրության յերկրորդ որինակը՝ Ազգությունների Սորհրդի ընտրությունների՝ միութեանական հանրապետության, ինքնավար հանրապետության կամ ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին:

Ընտրված է հաշվում այն թեկնածուն, վորն ստացել է ձայ-  
ների բացարձակ մեծամասնությունը, այսինքն բոլոր ձայների  
կեսից ավելին, վորոնք տրվել են ոկրուզում և ճանաչվել են վա-  
վերական, յեթե այդ դեպքում ոկրուզի ընտրություններում  
մասնակցել է այդ ոկրուզում քվեարկելու իրավունք ունեցող  
ընտրողների կեսից վոչ պակաս թիվը:

Արձանադրությունն ստորագրելուց հետո Միության Խոր-  
հրդի ընտրությունների Ոկրուզային հանձնաժողովի նախագա-  
հը հրապարակում է ընտրությունների արդյունքները և Միու-  
թյան Խորհրդի պատգամավորության ընտրված թեկնածույին  
վկայական է տալիս ընտրվելու մասին:

Նույն ձևով վարվում է և Ազգությունների Խորհրդի ընտ-  
րությունների Ոկրուզային հանձնաժողովի նախագահն Ազգու-  
թյունների Խորհրդի պատգամավորության ընտրված թեկնա-  
ծույի նկատմամբ (հոդվ. 105, 106):

Այն դեպքում, յերբ վոչ մի թեկնածու չի ստանում ձայների  
բացարձակ մեծամասնությունը, համապատասխան Ոկրուզային  
ընտրական հանձնաժողովը դրա մասին հատուկ նշում է անում  
արձանադրությունում, հայտնում է Կենտրոնական ընտրական  
հանձնաժողովին և Ազգությունների Խորհրդի ընտրությունների՝  
հանրապետական, ինքնավար մարզի կամ ազգային ոկրուզի ընտ-  
րական հանձնաժողովին: Միաժամանակ ոկրուզային ընտրական  
հանձնաժողովը հայտարարում է ամենից շատ ձայն ստացող  
յերկու թեկնածուների վերաքվեարկություն (կրկնակի քվեար-  
կություն): Վերաքվեարկությունը պետք է կատարվի վոչ ուշ,  
քան ընտրությունների առաջին շրջանը վերջանալուց յերկու շա-  
բաթ հետո:

Վերն արդեն նշվել է, վոր Անգլիայում, որինակ, համար-  
վում է ընտրված այն թեկնածուն, վորը թեկուզ ձայների համե-  
մատական մեծամասնություն է ստացել, այսինքն, նույնիսկ յե-  
թե մինչև անգամ մյուս թեկնածուներին միատեղ վերցրած՝  
ընտրողները տվել են քվեների ահադին մեծամասնությունը:

Փրանսիայում, այն դեպքում, յերբ ընտրությունների առա-  
ջին շրջանում վոչ մի թեկնածու ձայների բացարձակ մեծամաս-  
նություն չի ստանում, ապա նշանակվում է վերաքվեարկու-  
թյուն (այնտեղ նա կոչվում է «քվեարկություն»), վորտեղ կա-  
րող են քվեարկվել բոլոր նախկին առաջադրված թեկնածուները:  
Պետք է ասել, վոր այս կարգը բաղմամբիվ չարարկություններ է  
առաջացնում, վորովհետև մի քանի թեկնածուներ առաջադրվում  
են հատուկ նպատակով՝ ընտրությունների յերկրորդ շրջանում  
ներանց թեկնածությունը յետ վերցնել մի ուրիշ թեկնածույի  
ողտի համար, կամ վորի կուսակցությունից դրա համար  
ստանում են վորոնչ վարձատրություն:

Մեր ընտրական որենքը քվեարկության ժամանակ միանգա-  
մայն ճիշտ կերպով հենց իրենց՝ ընտրողներին է իրավունք տա-  
լիս վորոշելու, թե արդյոք առաջին շրջանում ամենաշատ ձայն  
ստացող յերկու թեկնածուներից վո՛րը պետք է ընտրվի:

Կարիք չկա նորից քվեարկության դնել մյուս թեկնածուներ  
ի թեկնածությունը, քանի վոր առաջին շրջանում ընտրողների  
աննշան մասն է նրանց ձայն տվել և՛ հտեվապես՝ վոչ մի հիմք  
չկա մտածելու, վոր նրանք յերկրորդ շրջանում կարողանան  
ձայների բացարձակ մեծամասնություն շահել:

Ընտրությունները յե՞րբ են փանաչվում անվավեր: Այն դեպ-  
քում, յերբ ընտրություններում մասնակցել է տվյալ ընտրական  
ոկրուզի ընտրողների կեսից պակասը: Միության Խորհրդի կամ  
Ազգությունների Խորհրդի ընտրությունների Ոկրուզային ընտ-  
րական հանձնաժողովը, այդ հատուկ նշելով արձանադրության  
մեջ, անմիջապես հազորդում է Ազգությունների Խորհրդի ընտ-  
րությունների՝ հանրապետության, ինքնավար մարզի Կենտրոնա-  
կան ընտրական հանձնաժողովին:

Այս դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշա-  
նակում է նոր ընտրություններ վոչ ուշ, քան առաջին ընտրու-  
թյուններից հետո յերկու շաբաթ ժամանակամիջոցում:

Շատ բուրժուական յերկրներում ընտրությունները համար-  
վում են վավերական, թեկուզ այնտեղ ներկայացել է ընտրող-

ների 25-30 տողուքը, վոր հաճախ և տեղի յե ունենում :

Դժվար է յենթադրել, վոր մեզ մոտ աշխատավորների քաղաքական գիտակցութեան բարձր մակարդակի կապակցութեամբ՝ հնարավոր լինի, վոր ընտրողների կեսից ավելին չի ներկայանա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեաններին: Սակայն որենքը պարտավոր է նախատեսել այդպիսի դեպքեր: Մեր ընտրական որենքը համարում է, վոր յեթե ընտրական օկուպի ընտրութեաններին մասնակցել է ընտրողների կեսից պակասը, ապա ընտրութեանները չի կարելի հաշվել իսկական ժողովրդական կամքի արտահայտութեան, դրա համար նրանք հայտարարվում են անվավեր և կատարվում են նորից:

Ինչպես վերաբերվեալ ընտրութեանը, այնպես և նոր ընտրութեանները կատարվում են «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեաններին կանոնադրութեան»-ը միանգամայն համապատասխան և ըստ ընտրողների առաջին ընտրութեանների համար կազմված ցուցակների:

Այն դեպքում, յերբ պատգամավորը դուրս է գալիս ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմից, Գերագույն Խորհրդի Նախագահութեանը պատգամավորի դուրս գալուց հետո յերկու շաբաթվա ժամանակամիջոցում նշանակում է նոր պատգամավորների ընտրութեաններ այն ընտրական օկուպում, վորտեղ ընտրված էր դուրս յեկած պատգամավորը: Ընտրութեանները կատարվում են վոչ ուշ, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից պատգամավորի դուրս գալուց սկսած յերկու ամսվա ժամանակամիջոցում:

ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրութեանը 50-րդ հոդվածում սահմանում է, վոր Միութեան Խորհուրդը և Ազգութեանների Խորհուրդն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, վորոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի պատգամավորների լիազորութեանները: Այդ մանդատային հանձնաժողովներին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեանների կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանձնում է ընտրութեանների գործառնութեանը:

Մանդատային հանձնաժողովի ղեկուցման հիման վրա պալատները վորոշում են՝ կամ ընդունել լիազորութեանները, կամ բեկանել առանձին պատգամավորների ընտրութեանները:

Որենքը քրեական պատիժ է սահմանում նրանց համար, ովքեր ԽՍՀՄ քաղաքացիներին նրանց ընտրական իրավունքի իրականացման գործում արգելքներ են ստեղծում:

Ընտրական որենքում ասված է.

«Ամեն վոք, ով բռնութեան, խաբեբայութեան, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա ԽՍՀՄ քաղաքացուն՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքն իրականացնելու գործում, պատժվում է ազատազրկմամբ մինչև յերկու տարի ժամանակով» (հոդվ. 111):

«Խորհրդի այն պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կկեղծի ընտրական փաստաթղթերը կամ գիտավորյալ կերպով սխալ կհաշվի ձայները, — պատժվում է ազատազրկմամբ մինչև 3 տարի ժամանակով» (հոդվ. 112):

Բուրժուական-դեմոկրատական յերկրներում նույնպես որենքներ դրուելուն ունեն, վորոնք արգելում են ընտրողի նրկատմամբ գործադրել ճնշում, սպառնալիքներ և այլն: Բայց մենք իրականում ի՞նչ ենք տեսնում այնտեղ: Իրականում այնտեղ ծաղկում է անդուսպ կաշառակերութեան՝ ընտրողների ամեն տեսակի «նվերների» անվան տակ: Իրար մեջ պայքար մղող զանազան բուրժուական կուսակցութեանները ընտրողների մասաներին տեղորի և շանտաժի յեն յենթարկում, աշխատելով ինչ ղեղով ել լինի իրենց թեկնածուներին ապահովել ձայներով: Մենք տեսնում ենք, վոր ամենադեմոկրատիկ բուրժուական յերկրներից մեկում՝ Ամերիկայում հազվագյուտ չեն այն դեպքերը, յերբ ընտրական ձայներն առելտրի առարկա յեն հանդիսանում: Ընտրութեանների ծախսերը հսկայական չափերի յեն հասնում:

Որինակ՝ ըստ բրիտանական հանրագիտարանի տվյալների, ԱՄՆ-ի նախագահի ընտրութեանների արժեքը յերկու պայքարող կապիտալիստական կուսակցութեանների համար կազմում է

20 միլ. դրոշմը: Մեկ սենատորի ընտրութեան համար ծախսված է յեղել 100 հազ. դրոշմից ավելի:

Որենքները, վոր բուրժուական յերկրներում սահմանում են ընտրութեանների համար թեկնածուների կամ կուսակցութեանների կողմից ծախսվելիք գումարների առավելագույն չափը, և որենքները, վոր վորոշում են ընտրողներին կաշառելու նպատակով գործադրվող արգելված գործողութեանները շրջանը, շատ հեշտութեամբ դանց են առնվում:

Որինակ, Անգլիայում լայն կերպով գործադրվում էր թեկնածուի հաշիւն ընտրողներին կառք տրամադրելը նրանց քվեարկելու վայրը տանելու համար: Այդ նպատակին հատկացվում էր հազարավոր Փունտ ստերլինգ: 1883 թվի որենքն արգելեց վարձաւ կառքեր տրամադրելը: Բայց այդ ժամանակից սկսած՝ լայն կերպով գործադրվում է կալվածատերերի, Փարթիկանտների և այլնի սեփական ավտոմոբիլների, կառքերի տրամադրելը, վոր որենքի ներգործութեան տակ չէր ընկնում, ընդ վորում ընտրողներին ավելի հրապուրելու նպատակով տրամադրվում են տոհմանչաններով զարդարված ամենաչքեղ կառքերը, իսկ կառապանը կամ շոֆերը հենց նույն նպատակով հաճախ հանդիսանում է տխրոս կրող մի վորեւե յերիտասարդ դուքս, կոմս կամ բարոն:

Բուրժուական գիտնականների մեծամասնութեան ստիպված է խոստովանել, վոր գոյութեան ունեցող որենքները և նրանց կիրառման կարգն այնտեղ լայն ասպարեղ են ստեղծում չարահուլութեանները համար, ընտրողների վրա ճնշում դործ դնելու համար, ի հարկէ՝ կապիտալիստների և կալվածատերերի շահերի կապակցութեամբ:

Մեր ընտրական որենքը իստիվ պատժում է ամեն մի անձնավորութեան, վորը բունութեան, խարեբայութեան, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա իՍՂՄ քաղաքացուն՝ իՍՂՄ Գերագույն Սորհրդի պատգամավոր ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքի իրականացման գործում և՛

իլ առավել խիստ՝ Սորհրդի այն պաշտօնատար անձանց կամ ընտրական հանձնաժողովների անդամներին, վորոնք կկեղծեն ընտրական բյուլետենները, կամ դիտավորյալ կերպով ճիշտ չեն հաշիւի ճայները:

Սորհրդային Միութեան յուրաքանչյուր քաղաքացի անմիջականորեն պետք է ուսումնասիրի «ԻՍՂՄ Գերագույն Սորհրդի ընտրութեանների կանոնադրութեան» տեքստը: Իրան ոգնելը՝ մեր բոլոր աշխատողների, կուսակցական և անկուսակցական բուլեիկների ամենասառաջնակարգ խնդիրն է:

ԻՍՂՄ Միութեան Գերագույն Սորհրդի ընտրութեանները մտտ են: Մեր յերկիրն ստացավ աշխարհիս ամենադեմոկրատիկ ընտրական որենքը: Այդ որենքը կուսակցական կազմակերպութեանների, բոլոր կոմունիստների վրա հսկայական պարտականութեան է դնում՝ առավելագույն լայն չափով ծախվել մասսայական-քաղաքական աշխատանքը, ընտրութեաններն այնպես նախապատրաստել, վոր աշխատավոր մասսաները իՍՂՄ ապագա Գերագույն Սորհրդի անդամներ ընտրեն սոցիալիստական շինարարութեան իսկական, անհաշտ և անհողող պաշտպաններին, ճապոնա-գերմանական գործակալութեան՝ կապիտալիզմի տրոցկիստ-բուխարիստական վերականգնողների և մեղ դեռ չընտրատող կապիտալիստական այլ գործակալների կողմից Մեծ Սոցիալիստական Հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումներին վրտնձգող թշնամիների դեմ պայքարող աննկուն մարտիկներին ընտրել:

Պետք է հիշել, վոր հայրենիքի դավաճանները, ժողովրդի թշնամիները, ճապոնա-գերմանական լրտեսները և դիվերսանտները՝ տրոցկիստները, գիւնովյեվականները, բուխարիականները, ռիկովականները և այլ սրիկաները կիտրձեն Սորհուրդների ընտրութեաններն ոգտագործել իրենց ստոր հակահեղափոխական նպատակների համար: Մեր պարտքն է՝ ամեն կերպ բարձրացնել գլոնութեանը, նրանց դուրս վտնդել այն բոլոր վորջերից, վորտեղ նրանք թագնվել են, անխնա ջարդել ու արմատախիլ անել նրանց:

Սոցիալիստական պետութեան ընտրական օրենքը, վոր իրականացնում է Ստալինյան Սահմանադրութեան մեծ դազափարներն ու սկզբունքները, սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքները, մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ մտցնում է իսկական ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքը՝ զաղտնի քվեարկութեամբ:

Ընկեր Ստալինը, բնութագրելով նոր ընտրական օրենքը, ասաց.

«Մեր նոր ընտրական սխտեմն առաջ կշարժի բոլոր հիմնարկութեաններին և կազմակերպութեաններին, կտալի նրանց բարելավելու իրենց աշխատանքը: Ընդհանուր, հավասար, ուղղակի և զաղտնի ընտրութեանները ԽՍՀՄ-ում վորպես մտրակ կհանդիսանա բնակչութեան ձեռքին իշխանութեան վատ աշխատող որդանների դեմ»: <sup>1)</sup>

«ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրութեանների կանոնադրութեան» պարզ հստակ հոդվածներում պաշտպանված են խորհրդային ընտրողի բոլոր իրավունքները, ապահովված են և յերաշխսավորված ընտրութեանների իսկական ազատութեանը, խորհրդային ժողովրդի իր սոցիալիստական պետութեան կառավարման մեջ իսկական մասնակցութեանը:



<sup>1)</sup> Ընկեր Ստալինի վերոյցը պարոն Ռոյ Հովարդի հետ, յերես 23:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՍՀՄ-ի ընտրական սխտեմը . . . . .	3
2. Ընտրողների ցուցակները կազմելու կարգը . . . . .	27
3. Ընտրական ոկրուղները . . . . .	33
4. Ընտրական շրջանները . . . . .	37
5. Ընտրական հանձնաժողովները . . . . .	41
6. Թեկնածուներ առաջադրելու կարգը . . . . .	46
7. Քվեարկութեան կարգը . . . . .	58
8. Ընտրութեանների արդյունքների վորոշումը . . . . .	62

Թարգմ. Հ. Հարությունյան և Վարդ-Կամսար  
Պատ. խմբագիր՝ Հ. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան  
Սրբագրիչ՝ Լ. Ավագյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբազյան



---

Գլավխիտի լիազոր Խ— 9313. Հրատ. 4361

Պատվեր 1277. Տիրաժ 20.000

Թուղթ 62×94. Տպագր. 4 մամ.

Մեկ մամ. 34560 նիշ. Հեղին. 3 $\frac{3}{4}$  մամ.

Հանձնված է արտագրության 26 նոյեմբերի 1937 թ.

Ստորագրված է տպագրության 4 դեկտեմբերի 1937 թ.

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.


---

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. № 65

«Ազգային գրադարան»



NL0206361



ԳԻՆԸ 60 4.

544

35. 731

Н. В. КРЫЛЕНКО  
**Избирательный закон  
союза ССР**  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.